1959—1968 թթ. քնթացքում հողային բարեփոխությունների օրենքի կենսազորման շնորհիվ 65 հազար հողազուրկ և սակավահող գյուղացիներ ստացան 672,337 հա, այսինքն ստարված հողատարածության՝ 1,356,138 հա, միայն 49,8%-ը⁷⁵։ Իսկ մինչև 1974 թվականը գյուղացիներին բաժանվեց 1,5 մլն հա կալվածատերական և 600 հազար հա պետական հողատարածություն⁷⁶։

Հողային վերափոխությունների քաղաքականությունը լայր հարված հասցրեց ֆեոդալական կալվածատերական ուժերի դիրքերին, վերացրեց ֆեոդալական արտադրանքարտաբերությունների բուրժուազիական արտադրանքարտաբերություններին բուրժուազիական դարձնելը և զանազան հարկեր, սրեց դասակարգային պայքարը գյուղում և բարձրացրեց գյուղացիության դասակարգային գիտակցությունը։ Սակայն հողային հարցը զուտ լի ստացել իր արմատական լուծումը՝ Դեռևս գոյություն ունի հողազուրկ գյուղացիներ մի շո՛ք դանազված, իսկ հող ստացող գյուղացիներին մեծ մասը, զրկված լինելով նյութական միջոցներից, իր հողակտորը վարձով է առնել գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչներին, որոնք, օգտագործելով ժամանակակից տեխնիկան, ստեղծում են կապիտալիստական համեմատաբար խոշոր տնտեսություններ։ Մոտ 4600 խոշոր

Հողատերերը, որոնց վրա թեև տարածվում էր բարեփոխությունների օրենքը, շարունակում էին օգտագործել ինչ-որ ձևով պահպանած իրենց լայն Հողատարածությունները և շահագործել նրանց վրա աշխատող գյուղացիներին⁷¹:

Միջինում լայն թափ ստացավ գյուղատնտեսական կոոպերատիվ շարժումը: Մինչև 1974 թ. երկրում կային 1723 մասնակարարող, վաճառող կոոպերատիվներ, որոնք ընդգրկում էին 135 հազար գյուղացիական ընտանիք և որոնց տնօրինության տակ էր գտնվում մշակելի Հողատարածության 1/3 մասը⁷²: Իսկ 1979 թ. կոոպերատիվների թիվը հասավ 3501-ի, որոնք ընդգրկում էին 304844 մարդ և զբաղեցնում 1504 հազար հեկտար Հողատարածություն⁷³:

Վարկերի, սերմացուի, պարարտանյութի, գյուղատնտեսական գործիքների, ժամանակակից տեխնիկայի և ոռոգման միջոցների ապահովման գործում պետությունը զգալի օգնություն է ցուցաբերում կոոպերատիվներին: Գյուղատնտեսական կոոպերատիվ բանկի արձանագրած վարկերը տարեցտարի կառավարվել են 1967 թ. դրանք կաշվում էին 20,508,736 սֆր. լիրա⁸⁰, ապա 1979 թ.⁸¹ 609,9 մլն լիրա⁸²: Մակաչի կոոպերատիվները կանգնած են զովարությունների առջև. զեռես անբավարար է չբավոր և մանր գյուղացիությունն զերբ կոոպերատիվների վարչության ղեկավարման գործում, որ հարուստ գյուղացիները նպաստել են պետական միջոցները օգտագործել անձնական նպատակների համար, զեկվադոր մարմիններում բացակայում են զեմոնրատական սկզբունքները, երբեմն էլ պետական մարմինների միջամտությունը խոչընդոտում է նրանց բնականորեն զարգացումը, հատուկ ուշադրություն չի դարձվում կոոպերատիվների անդամների մասնագիտական որակավորմանը և չուկայում գյուղատնտեսական միջոցների իրացմանը:

Հողային բարեփոխությունների օրենքը նախատեսում է պետական տնտեսությունների ստեղծում: Մինչև 1975 թ. երկրում հիմնվել են 15 փորձնական և արտադրական պետական տնտեսություններ, որոնք ընդգրկում էին 6100 հա ոռոգվող և 127000 հա անըրզի Հողատարածություն⁸², Սակայն բարե-

կապտ տրամաններն առկա էին պետական տնտեսությունների բազմացման և գյուղատնտեսական կոոպերացիաների տարածման համար, հատկապես պետության կողմից նոր յուրացված Հողատարածություններում:

Միջինի գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման նըպաստակով տարեցտարի աճում են նրան հատկացվող կապիտալ ներդրումները, կիի 1967 թ. դրանք կազմում էին 436,315 հազար սֆր. լիրա⁸³, ապա 1975 թ.⁸⁴ 1254 մլն, իսկ 1979 թ.⁸⁵ 1611 մլն սֆր. լիրա⁸⁶: Գյուղատնտեսական համախառն արտադրույթը այդ թվականներին համապատասխանաբար կազմում էր 1039,3⁸⁵, 2014,2, 2170,2 մլն սֆր. լիրա⁸⁶: Այսինքն՝ գյուղատնտեսական արտադրանքը 1867 թ. համեմատությամբ 1875 և 1977 թվականներին աճել էր համապատասխանաբար 89,8 և 108,8% -ով:

Քանի որ գյուղատնտեսությունը հիմնականում համարվում է մասնավոր հատված, ուստի բացի պետության հատկացրած կապիտալ ներդրումներից, մասնավոր հատվածը կույնպես հակալական դուժարներ է ներդրում: Այսուհանդերձ գյուղատնտեսական արտադրանքի աճը եւս է մնում աճող պոտանշալից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ 1876 թ. Միջինն ներմուծեց 1,5 մլրդ սֆր. լիրայի գյուղատնտեսական զանազան միջոցներ⁸⁷:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Միջինի գյուղատնտեսությունն առջև լուրջ խնդիրներ են կանգնած, և սերիական կառավարությունը շատ անելիքներ ունի այդ ուղղությամբ:

Քաջ գիտակցելով հանդերձ, որ Հողային բարեփոխությունների մասին վերը նշված օրենքները լիովին չեն լուծի սպարտային հարցը, Միջինի առաջադիմական-հայրենասիրական ուժերը, անխտամենայնիվ պաշտպանում են այդ օրենքները և որչ ուժերը ներդնում դրանք կենսադրոշմու և խորաշնչելու համար:

Ազգային հարցը լուծելու առաջին նահեղական ծրագրով հանդես է գալիս ՍԿԿ-ը 1969 թ. կուսակցության III

Համագումարը առաջ ցածից ագրարային նոր ծրագիր, որը գյուղացիական զանգվածներին կոչ էր անում պայքարել հանուն ազգային-դեմոկրատական հեղափոխության խնդիրների իրականացման: Համագումարը մասնավորապես ընդգծում էր, որ արմատական բարեփոխությունները պետք է ուղղված լինեն կալվածատիրական հողատիրության մեաջորդները ոչնչացնելուն⁸⁸:

1974 թ. կոմկուսի IV Համագումարը սահմանեց կուսակցության գլխավոր գիրք գյուղացիական հարցում: Երազրում արտացոլված էին փոխադարձաբար կապված նրկու գաղափար, այն է՝ «կալվածատիրական սեփականության մեաջորդները վերացնելու լոգունգով գյուղացիներին ազգային-դեմոկրատական հեղափոխության մեջ ներգրավել և թջոչում հանուն սոցիալիստական վերափոխությունների հողթնակիչ մղվելից պայքարի համար համապատասխան սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններ նախապատրաստել: Ըստ որում բանվոր դասակարգը պետք է մշտականորեն պաշտպանի գյուղացիների պահանջները: Սիրիայի կոմունիստական կուսակցությունը հանդես եկավ ազգային-դեմոկրատական հեղափոխության մեջ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքում արմատական պահանջով:

Կոմկուսը կարևորագույն խնդիր էր համարում.

— բունգրավել խոշոր կալվածատեր-ֆեոդալների մնացած հողերը, սահմանափակել հողատիրության և հողօգտագործման առավելագույն շախր:

— շարունակել բունգրավված և պետական հողերի բաժանումը ընաղաղրի և աղքատ գյուղացիներին.

— դեմոկրատական հիմունքներով դարի առ կուլտեստեսային կարգի տարածմանը, որը թույլ է տալիս ուսցիտես կերպով օգտագործել աշխատանքային ռեսուրսները, կիրառել նոր տեխնիկան, լայն հնարավորություններ է ստեղծում գյուղացիների եկամտեսների ու բարեկեցության բարձրացման համար.

— ընդլայնել գյուղատնտեսական հանրային հատվածը, շարունակելով խոշոան հողերի յուրացումը և պետական արև-

տեսությունների ստեղծումը, հատկապես Եփրատի աղաղանում.

— կատարելագործել գյուղատնտեսության համակողմանի զարգացման պլանավորումը, որպեսզի ապահովի հողագործության, տեստեսպահության և արդյունաբերական կուլտեսունների արտագրանի բարձրացումը.

— բարելավել գյուղատնտեսական բանկի գործունեսությունը, մարի տալ միջան ընաղաղրի, աղքատ և միջին գյուղացիներին, կոսպերատիվներին ու կուլտեսություններին.

— հիմնել պետական մասնագրտացված հիմնարկներ գյուղատնտեսական մթերքների մշտաորի համար⁸⁹:

1980 թ. գումարված Սիրիայի կոմկուսի V Համագումարում հայնպես աղի ընկնող տեղ գրավից ագրարային հարցը: Հնաղիտես դեկուցման մեջ նշվում էր, որ գյուղում հարկավոր է կրկնայն ձևերով մշնել գյուղական բուրժուաղիայի (կուլտեսության) աճող դիմաղրությունը: Կուլտեսները մարձակայնում էին հողերն ու գյուղատնտեսական մեքենաները, նեղում լրավորությանը: Կուսակցությունը անհնաղաղաղ էր համարում յուրունակի աղաղարը հողային բարեփոխությունների լրակատար խորացման ու կատարելագործման համար, իրաղործել կոմունիստեսների առաղ բաղած «հողը՝ մշակողիչն» հեղափոխական լոգունգը և ծրագրել սոցիալիստական հողաղործության կաղմակերպման նպատակին ուղղված միըղացումներ⁹⁰:

Սիրիայի սոցիալ-տնտեսական առաղաղիմական վերափոխությունների համակարգում նշանակաղից տեղ է գրավում աղաղային արդյունաբերությունը: Սիրիայում արդյունաբերության առավել զարգացած շյուղերից են թեթև, նավթայինիական, մետաղամշակման, էլեկտրոէներղիայի և շինեսկոյունների արդյունաբերությունը:

Մինչև 1979 թ. երկրում հաղվվում էր պետական հատվածի՝ 1071 խոշոր և մասնավոր հատվածի 43460 մանը, ընգումներ 44531 արղյունաբերական ձևաբերղություն⁹¹: 1979 թ. աղլաներով միայն պետական հատվածում աղխատում էր

96856 բանվոր⁹²։ Տարեցտարի աճում են պետական հատվածին հատկացվող կապիտալ ներդրումները, որոնց մասին պատկերացում է տալիս աղյուսակ 1-ը։

Աղյուսակ 1
Միբրայի արդյունաբերական պետական հատվածի կապիտալ ներդրումները

Տարեթիվ	Կապիտալ ներդրումները (մլն. սիր. լիրա)	Տեղանկերով նախորդ տարվա համեմատությամբ
1972	339,3	—
1973	436,3	29
1974	960,4	125
1975	1393,1	65,8
1976	1272,2	89,6

Հարկ է նշել, որ դրանք 1979 թ. կառնեցին 3636194 հազար սիր. լիրա⁹⁴։

Այս միջոցառումները, անշուշտ, առաջադիմական բրնայթ էին կրում, քանի որ բարեկատու պայմաններ էին ըստեղծում աղյուսակի արդյունաբերության համար։ Սակայն, պետք է նշել, որ տեղի էր ունենում այդ ներդրումների զգալի վատնում և շարաշահում՝ պետական բյուրոկրատական ապարատի որոշ ծառայողների, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից։ Բանն այն է, որ Միբրայում դեռևս գոյություն ունեցող կապիտալիստական մասնավոր հատված, որն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում անտեսության մի շարք նյութերում, հատկապես վերամշակող արդյունաբերության, սպասարկման, շինարարության և ներքին մեծածախ առևտրի ոլորտներում։ Այսպես, 1970 թ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր արժեքը կազմում էր 2,621 մլն լիրա, որից 855 մլն, այսինքն 32,6%⁹⁵ պատկանում էր մասնավոր հատվածին։

Միբրայի արդյունաբերության արդիականացման գոր-

ծում նշանակալից էր ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների ցույց տված անսենական ու տեխնիկական օգնությունը։ 1957—1975 թթ. ՍՍՀՄ-ի օժանդակությամբ Միբրայում շարք մտան ավելի քան 23 օբյեկտներ, այդ թվում՝ արդյունաբերական 9 խոշոր ձեռնարկություններ։ Կառուցման ընթացքում մեծ գումարում 25-ից ավելի օբյեկտներ⁹⁶։ Տնտեսության և հասակացն, էներգետիկ բալանսի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ Սովետական Միության օգնությամբ Եփրատի ամբարտակի և ջրաէլեկտրակայանի կառուցումը, որը տալիս է երկրի էլեկտրաէներգիայի 80% -ը և ավիացրել է մշակելի հողատարածությունը 600 հազար հեկտար⁹⁷։

Սովետական Միությունը Միբրային ցույց է տալիս բազմակողմանի օգնություն, որն առաջին հերթին նպաստում է երկրում արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծմանը, գյուղատնտեսության հետագա զարգացմանը, պետական հատվածի ամրապնդմանը։ Միբրայի կոմկուրբ բարձր է զննատառում Սովետական Միության անշահախնդիր օգնությունը, որը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսական անկախության եկամտան և քաղաքական անկախության ամրապնդման գործում։ Ահա, թե այդ մասին ինչ է գրում «Ռիրասաթ իշխիրաս» ամսագիրը. «Սովետական Միության տնտեսական-տեխնիկական օգնությունը մեր աշխատավորական գանձվածուկը զննատառում էն որպես եղբայրական օգնություն, որն արտահայտում է մարտնչող ժողովուրդների հանդեպ Սովետական Միության քաղաքականության ինտերնացիոնալիստական բնույթը։ Մեր մոլորվորը քաջ դիտակցում է, որ ՍՍՀՄ-ն ու սոցիալիստական մյուս երկրները չունեն ավելորդ կապիտալներ՝ արտահանելու և ներդնելու զարգացող երկրներում բնական պետություններ ազատորեն թալանելու, ինչպես այդ անում են իմպերիալիստական մոնոպոլիաները»⁹⁸։

Միբրայի կոմկուրբ գտնում է, որ արդյունաբերական պետական հատվածի հետագա զարգացման համար անհրաժեշտ է այն ազատել պրոտարյուծ մասնավոր հատվածի շահագործումից, վերածել տնտեսության դիմավոր օղակի, ազատել

Միջին ներմուծումների բաշխումը պետական և մասնավոր հատվածների միջև

Ցուցիչ	1972	1974	1975	1976
Պետ. հատված	1611	2462	4311	5771
Մասնավոր հատված	731	1108	1724	3932

Նշված թվերը փաստում են, որ ներմուծումները պետական հատվածում աճել էին քնգամներ 3,6 անգամ, իսկ մասնավոր հատվածում՝ աճում էր 2 անգամ: 1973—1976 թթ. խոշոր առևտրականների գոտ շահույթը արտաքին առևտրից կազմել է 2 միլիարդ սիր. լիրա¹⁰¹:

Ի կառույցումն ազգային առաջդիմական ճակատի 1979 թ. որոշումների, սիրիական կառավարությունը ձեռնարկում էր մի շարք օրենքների հրատարակման: Պետական օպորտուրը հետադիմական և կաշառակեր տարրերից մաքրելու նպատակով կազմակերպվեց հատուկ կոմիտե: Խիստ նկատելի էր սահմանվեց վալյուտային գործողությունների նկատմամբ վերացվեց սև շուկան և ստեղծվեց նրան համարժեք պետական շուկա, որը սկսեց կարգավորել վալյուտային թնկացադիր: Վերստին գործադրվեցին մի շարք սահմանափակումներ արտաքին առևտրի մասնավոր հատվածի նկատմամբ: Այդ միջոցառումների շնորհիվ զգալիորեն բարձրացավ առևտրի պետական հատվածի դերը: 1979 թ. տվյալներով, պետական հատվածի կողմից արտահանվել է 5931,9 և ներմուծվել է 9445,7 մլն սիր. լիրա արժողությամբ ապրանք, միևնույն մասնավոր հատվածի կողմից համապատասխանաբար՝ 3621,1 և 521,4 մլն սիր. լիրայի¹⁰²: Պա նշանակում է, որ 1976 թ. համեմատությամբ պետական հատվածի ներմուծումներն աճել են 1,6 անգամ, այնինչ մասնավորները նվազել է:

Սիրիան հիմնականում ներմուծում է ավտոմեքենաներ,

բյուրոկրատիզմի բաշխումներից, ավելացնել կապիտալ ներդրումները, ապահովել անհրաժեշտ որակյալ կադրերով արտադրության մեջ կենսագործել նյութական և բարոյական խթանները, բարելավել աշխատավորության սոցիալական ապահովագրության, կրթության, առողջապահության, կուլտուրական հանգստի պայմանները: Կոմկուսը նաև անհրաժեշտ է համարում կազմակերպել արտադրական բանվորական կոմիտեներ, որոնք կմասնակցեն և կվերահսկեն արտադրության զեկավարումը, յուրաքանչյուր ձեռնարկությունում և հիմնարկում ստեղծել ազգային առաջդիմական ճակատի մասնաճյուղեր⁹⁹:

Սիրիայի տնտեսության մեջ կարևոր դեր է խաղում առևտուրը: Նա ապին է ազգային եկամտի 15%-ը: Մանեզատի մասնակց Սիրիայի առևտուրը ամբողջովին կախված էր օտարերկրյա՝ ֆրանսիական, անգլիական և ամերիկյան կապիտալից: Քաղաքական անկախություն ձեռք բերելուց հետո ազգային իշխանությունը ձգտում էր ամեն կերպ ազատվել կապիտալիստական մոնոպոլիաների գերիշխանությունից: 1967 թվականից սկսած սիրիական կառավարությունների կիրառած ազգայնացումների շնորհիվ, ուժեղացավ պետական հատվածի դերը նաև առևտրի քնազավառումը: Բասս կուսակցության մարզային IV (1968 թ.), V (1971) և VI (1975 թ.) համագումարները հաստի ուղադրություն նվիրեցին արտաքին առևտրի լիակատար ազգայնացման հարցին: Պաշտոնական տվյալների համաձայն 1976 թ. արտաքին առևտրի պետական հատվածի ձեռքում էր կենտրոնացված կլմուտայի 68,7%-ը:

Մակայն մասնավոր հատվածի զբոլությունը մեծ վտանգ է ներկայացնում, հատկապես ներմուծումների ներքին առևտրի սպալարում, որ այն տնօրինում է ապրանքաշրջանառության 80%-ը:

Ստորև բերված աղյուսակը (աղ. 2) ցույց է առաջ ներմուծումների բաշխումը պետական և մասնավոր հատվածների միջև (մլն. սիր. լիրայով):

սարքավորումներ, դուրդատնեսական մեքենաներ, բիմբուկան նյութեր, անդամներ, շումբ, կիսամշակված արդյունաբերական ապրանքներ, քանակաբանական արտադրանքներ 1967 թ. նրա ներմուծումները կազմեցին 1009 մլն. սիր. լիրա¹⁰³, իսկ 1975 թ.՝ 6236 մլն լիրա¹⁰⁴, այլ խոսքով՝ աճեցին ավելի քան 6 անգամ, մինչ արտածումները համապատասխանաբար կազմեցին 589¹⁰⁵ և 2440, 9 մլն սիր. լիրա¹⁰⁶, այսինքն՝ աճեցին 5,7 անգամ: Հարկ է նշել, սակայն, որ և՛ 1967 թ. արտաբերյալի արտադրության հաշվեկշիռը կազմել է 410 մլն լիրա¹⁰⁷, այսպես 1975 թ. ամբողջ աշխարհի՝ 2795,1 մլն սիր. լիրայի¹⁰⁸: Բացասական հաշվեկշիռը 1976, 1977, 1978 թվականներին համապատասխանաբար էղանց 5062¹⁰⁹, 6250 և 5500 մլն սիր. լիրա¹¹⁰:

Սիրիայի արտաբերյալի արտադրության հաշվեկշիռը արդյունք է ԱՄՆ-ի և արևմտյան իմպերիալիստական պետությունների հետ կնքված անիրավահավասար անտարակոտ համաձայնագրերի, որոնք ամեն կերպ շահում են ավելի շատ արտահանողի, քան ներմուծող, Սիրիային մշտապես կախման մեջ պահել համաշխարհային կապիտալիստական տնտեսություններ, անընդհատ բարձրացնել արդյունաբերական և կիսամշակված ապրանքների գները՝ կապված կապիտալիստական աշխարհի անտեսական ճգնաժամի հետ:

Սիրիայի ներմուծումները կապիտալիստական երկրներից 1976 թ. կազմեցին 6283144 հազար սիր. լիրա, այսինքն՝ ընդհանուր ներմուծումների 68,2%-ը, մինչդեռ նրա արտահանումները կազմեցին ընդամենը 2437373 հազար սիր. լիրա, այսինքն՝ ընդհանուր ծավալի 58,8%-ը¹¹¹: Գա նշանակում է, որ Սիրիայի անտարակոտ բացասական հաշվեկշիռը կապիտալիստական երկրների հետ 1976 թ. կազմեց 3,845,771 հազար սիր. լիրա: Եվ 1979 թ. Հեռանդրված միջոցառումների շնորհիվ այն իրավիճակում էր, որ Սիրիայի կապիտալիստական շրջանները աշխատում են Սիրիայից ներմուծել իրենց համար անհրաժեշտ ռումբը (բամբակ, նավթ, հացահատիկ), դրա փոխարեն Սիրիա արտահանել միջին կամ ցածր

տեխնոլոգիական մակարդակ ունեցող գործարաններ, որոնց արևելք բարձր է, իսկ արտագրողականությունը՝ ցածր: Սիրիայի ստացադեմ տնտեսագիտական գրիտոր Ռիզկ Ալլա Հիլանը իրավաբանական նշում էր. «Մեր արտաբերյալի անտարակոտ համաձայնագրերը կախված է կապիտալիստական մոնոպոլիստական քնկերություններից, որոնք պարտադրում են մեզ վաճառել մեր արտահանումները ցածր գներով, փոխարենը ներմուծելով բարձր գներով սպառողական ապրանքներ»¹¹²:

Ընդհանրապես, Սիրիայի հետ ՍՄՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների անտարակոտ հարաբերությունները խորսրված են համահավասարության և փոխհարգանքի սկզբունքների վրա: Ի տարբերություն կապիտալիստական երկրների, սոցիալիզմի երկրների ընկերակցության հետ Սիրիայի անտարակոտ հաշվեկշիռը հաճախ ակտիվ էր, իսկ նրանք էլ բացասական հաշվեկշիռը կնքում էին, այսպես չինյուն էր առաջինի համեմատությամբ: Սոցիալիստական երկրների հետ անտարակոտ հարաբերություններից մեկն էլ այն է, որ վերջիններ, արտահանում են Սիրիայի անտեսության զարգացման համար խիստ անհրաժեշտ ապրանքներ, փոխարենը գնելով սիրիական ավանդական ապրանքները: Այլ կերպ, Սովետական Միությունը վճարում էր ընդունում է ազգային վալյուտայով սիրիական լիրայով, մի բան, որ ուղղակի օգնություն է Սիրիայի տնտեսության զարգացմանը:

Սովետա-սիրիական անտարակոտ հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցան 1965 թ., 1970 թ. և 1976 թ. կնքված անտարակոտ պայմանագրերը:

Սիրիայի ներմուծումները Սովետական Միությունից 1967—1975 թթ. բարձրացել են 30,3-ից մինչև 99 մլն ուսրլի, այսինքն՝ 221,4%-ով, իսկ արտահանումները՝ 16,4-ից մինչև 66,8 մլն ուսրլի, այսինքն՝ աճել են 319,5%-ով¹¹⁴:

Չնայած անտարակոտ միջոցառումների ընդունված փոփոխության սահմանափակման ուղղությամբ սիրիական կապիտալիստական շրջաններին ու միջոցառումներին, հետագիմ շրջաններին հաճախ հաջողվում էր կրճատել սոցիա-

լիստական երկրների հետ Միջրիախի անտերատնտեսական կապերը կապտալիստական երկրների հետ կապերի ընդլայնման հաշվին: Եվ որքան քաղաքացիական էին այդ կապերը, նույնքան մեծանում էին արտաքին անտերի գեֆիցիտը, ինֆլյացիոն կրոնոլոգիան, բարձրանում գները և նվազում աշխատավորության ռուալ աշխատավարձը:

Միջրիական կառավարության և ԱՄՆ-ի 1979 թ. որոշումներից բխող միջոցառումներն ըստ էության կտրուկ բաշխել էին բարեկամելու երկրի անտեսական վիճակը, սակայն դրանց կենսագործումը թերի մնաց: Այս հարցում Միջրիախի կոմկուսի մշակած անտեսական ծրագիրը պահանջում էր արմատական վերափոխություններ իրագործել անտերի ոլորտում.

— բոլոր հիմնական ապրանքների կենտուր կենտրոնացնել անտերական պետական հատվածի ձեռքում.

— սահմանափակել պերճանքի առարկաների ներմուծումը, կամ էլ դրանց ներմուծումը կապել տեղական արդյունաբերական արտադրանքի արտահանման հետ.

— ապահովել արտաքին անտերի դրական հաշվեկշիռը.

— օգտվել սոցիալիստական երկրների առաջարկած երկարաժամկետ վարկերից և տնտեսության զարգացման տեմպերը արագացնելու նպատակով նրանցից ներմուծել անհրաժեշտ ապրանքներն ու անխիճկան.

— իրիստ միջոցներ ձեռնարկել մարտնենցների, միջնորդների, կաշառակիրների և կապալառուների նկատմամբ.

— հիմնել արտաքին անտերի բանկ, որը պետք է գրազվի ֆինանսավորման, վարկավորման և արտաքին փոխտոտությունների կարգավորման հարցերով.

— բոլոր երկրների հետ համեմատական հավասարակշռություն ապահովելու նպատակով վերադառնալ վճարային պայմանագրերի կգանակին և պարտադրել նրանց զեկ սիրիական արտադրանքը.

— ընդլայնել ներքին անտերի պետական հատվածը, բացել բաշխման ու վաճառման կետեր, որպեսզի վերջ արվի մասնավոր հատվածի միջնորդակները.

— ստեղծել ժողային անտերական նավատորմ.

— ուժեղացնել ժողովրդական վերահսկողությունը՝ ապահովելու կենսական անհրաժեշտությունները կայացնող մթերքների գների կայունացումը¹¹⁵.

Այլ էր պատկերը շինարարության, վերանորոգման, արանսպորտի տուրիզմի ոլորտներում, որոնք պլանավորային կենտրոնացված էին մասնավոր հատվածի ձեռքում: 1971—1975 թթ. 3-րդ հեռացյալ պլանը նախատեսում էր կառուցել 229421 բնակարան, որից շահագործման հանձնվեց 98974 բնակարան, այսինքն՝ 43%-ը միայն¹¹⁶: Չնայած երկրում կային պետքին 16 ընկերություններ և կոպային 296 միություններ, սակայն շինարարական կառույցների մեծ մասը կենտրոնացված էր մասնավոր կապալառու ընկերությունների ձեռքում: Այսպես, պետական հատվածի կողմից 1970—1978 թթ. կառուցվել էին 7444 բնակելի տներ, կոպալառուի շինարարությունում՝ ավելի քիչ, իսկ մասնավոր հատվածի կողմից երեք տարվա ընթացքում (1976—1978)՝ 120000 բնակարան¹¹⁷: 1975 թվականին, 1970 թ. համեմատությամբ, շինարարությունը աճել էր 247,6 տոկոսով, մինչդեռ զույգատնակությունը՝ 143,2, իսկ արդյունաբերությունը 135,2 տոկոսով¹¹⁸:

Բնակավարձը կազմում էր աշխատավարձի 25—50%-ը, իսկ թևակարանի սեփականությունը երազանք էր ժողովրդի մեծամասնության համար: Ուստի, Միջրիախի կոմկուսը պահանջում էր կենսագործել № 60 զեկերը, որի համաձայն կառավարությունը պետք է արգելակեր հողերի աճուրդային ստուծախը, հողը բաժաներ պետական և կոպերատիվ շինարարական ընկերություններին, որպեսզի բնակարանով ապահովվեին բոլոր կարիքավորները, լաշերոնի ծավալով պետական և կոպերատիվ շինարարությունը և ավելացնեք դրանց հատկացումները հիպոտեկային բանկի կողմից¹¹⁹:

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում Միջրիախի կառավարությունը հատուկ ուշադրություն նվիրեց ժողովրդական կրթության զարգացման և անգրագիտության վերացման

հարցին: Ոթն 1967 թ. լուսավորության և բարձրագույն մասնագիտական կրթության միջնադասարակարգի հասկացումները կազմում էին 155515¹²⁰, այս 1975 թ. դրանք հասան 1312296 հազար սիր. լիբրայ¹²¹, նկատելիորեն անց զգույցների թիվը և սովորողների բանակը: Այսպես, 1966—1967 թթ. երկրում կար 4875 տարրական դպրոց՝ 742681 աշակերտական սեղով¹²² և 639 միջնակարգ դպրոց՝ 201977 աշակերտով¹²³, իսկ 1974/1975 թթ. 6760¹²⁴ տարրական և միջնակարգ 1036 դպրոց¹²⁵, 1211570¹²⁶ և 1200009 աշակերտով¹²⁷: Դա նշանակում է, որ առաջին խմբի դպրողների աշակերտների թիվը մեծացել էր 1,7 անգամ, իսկ երկրորդինը՝ մոտ 6 անգամ: Գամասուխի և Հալեպի համալսարաններում 1967 թ. սովորում էր 31,644¹²⁸, իսկ 1975 թ. 61156 ուսանող¹²⁹, այսինքն, ուսանողների թիվը կրկնապատկվել էր: 1979 թ. երեք համալսարաններում արգեն սովորում էր 96040 ուսանող¹³⁰:

Անզբաղիտության վերացման ուղղությամբ հատուկ նշանակություն ունեցավ 1972 թ. № 7 դեկրետը: 1967—1975 թթ. անզբաղիտության վերացման զսաստիքներում սովորել էր 103236 մարդ¹³¹, Մինչդեռ 1979 թ. սովորող անզբաղանների թիվը կազմել էր 19496 մարդ, որոնցից 12898 ավարտել էին¹³²:

Հատուկ ուշադրություն էր դարձվել նախադպրոցական երեխաների հասարակական դաստիարակության հարցին: 1958 թ. երկրում կային 33431 երեխաներ, սակայն ոչ մի մանկապարտեզ: 1967 թ. արդեն հիմնադրվել էին 299 մանկապարտեզ՝ 29264 երեխայի համար, իսկ 1979 թ. համապատասխանաբար՝ 354 և 33429¹³³:

Ինչպես տեսնում ենք, այս բնագրովառում զգալի աշխատանքներ են կատարվել: Սակայն պետք է նկատել, որ այդ զարգացումը հիմնականում կենտրոնացված էր հանրակրթական համակարգում, իսկ պրոֆեսիոնալ-տեխնիկական ոլորտական հաստատությունները զեռուս չէին արժանացել համանման ուշադրության, մանավանդ, որ այս հանդամանքը մեծ նշանակություն ունի ուղղալին կարգերի պատրաստման և

տեխնոլոգիական զարգացման գործում: Այս հարցում օգնության ձեռք են մեկնում Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական երկրները, որտեղ սովորում են հազարավոր սիրելիքի ուսանողներ:

Սիրիայում կատարված սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխությունները խոշոր ազդեցություն ունեցան սիրիական հասարակության զսասակարգային կառուցվածքի վրա:

Պլուրալիստությունը կազմում է երկրի բնակչության 2/3 մասը: Այն երկար ժամանակ ենթարկվել է կալվածատիր-ֆեոդալների շահագործմանը և կեղերմանը: Պլուրալիստությունը միասեռ չէ և բաղկացած է զլիսավորապես յոթ խավերից. 1. աղքատ գյուղացիներ (կիսապրոլետարներ), 2. գյուղատնտեսական բանվորներ, 3. մշակներ, 4. հարուստ գյուղացիներ: 1964 թ. առաջին անգամ արտարկան աշխատում հիմնովյա Սիրիայի գյուղացիական միությունը, որը 1968 թ. հոկտեմբերի 13-ին, № 253 դեկրետի համաձայն, վերանվանվեց Պլուրալիստական արժմիությունների համընդհանուր ֆեդերացիա: 1979 թ. տվյալներով, երանում ընդգրկված էր 304844 գյուղացի¹³⁴: Համաձայն կանոնադրության, ֆեդերացիայի ղեկավար նպատակն է հաստատել գյուղատնտեսության սոցիալիստական եղանակ¹³⁵: Նրա կենտրոնական թերթն է «Նիզալ ալ Ֆալահին»:

Բանվոր զսասակարգը համեմատաբար ավելի երիտասարդ է, սակայն հաստեղի է նրա քաղաքական և որակական անը: Պետական Նախօրին շնորհիվ ընդլայնվեց երկրի ժամանակակից արդյունաբերությունը և, հետևապես, Երանում զարգված մարզկանց թիվը: Բանվորների առաջին միությունը Սիրիայում կազմվել էր դեռ 1925 թ., իսկ 1938 թ. վերակազմավորվել էր բանվորական արժմիությունների համընդհանուր ֆեդերացիան (ԲԱՀՑ): 1978 թ. Սիրիայի ԲԱՀՑ-ը բաղկացած էր 179 արժմիությունից, որտեղ ընդգրկված էին 506249 բանվոր¹³⁶: Մինչև 1978 թ. լույս էր տեսնում 95 արժմիութենական թերթ, իսկ ԲԱՀՑ-ի օրգանն էր «Քիֆահ ալ ումմալ ալ

իշխիրարքի» (ՎՄԽՄՎՅԻՐԱԿԱՆ՝ սոցիալիստական պայքար) Ինկերացիայի գլխավոր նպատակն էր «Առաջնորդել զսոսկարացային պայքարը, բարձրացնել արտադրողականությունը, պայքարել բյուրոկրատիզմի դեմ՝ որպես սոցիալիստական վերափոխման առաջին թշնամու, մերկացնել ու մեկուսացնել հակահեղափոխական շահագործող խավերն և բարձրացնել աշխատավորական դանդաղածնեկի զսոսկարացային գիտակցությունը»¹³⁷:

Հասարակությունն միջին խավերն էին ներկայացնում արհեստավորները, մանր և միջին անտարականները, պետական պաշտոնյաները և այլն: Սոցիալական առաջադիմությունն ուզին թելադրում էր այս խավերի աշատագրումը բյուրոսպարտիզմի գազախորակն, քաղաքական և տնտեսական ազդեցությունից և կախմամբությունից:

Միրիայի կյանքում խոշոր ուժ է և աղքեցիկ գեր է խաղում առաջադեմ մտավորականությունը: Այն պայքար է մղողում բյուրոկրատիզմի, բյուրոսպարտիզմի դեմ թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ապարեզներում:

Միրիայում դեռևս գոյություն ունեն շահագործող հետագեմ ու պահպանողական ուժեր, որոնք, թևակոխելով հարձած ստացան ազգայնացումներից ու հողային բարեփոխություններից, սակայն շարունակում են մահու և կենաց պայքար մղել Միրիային շեղելու առաջադիմական ուղուց:

Դրանցից ամենափաստագրվող հասարակական այն շերտն է, որ կազմված է բյուրոսպարտիզմի, խոշոր միջնորդ անտարականների, վաշխատանների և մաքսանեղեցիների ներկայացուցիչներից: Հիշատակված ուժերի լեցույ և անլեզու քաղաքական ու արհեստակցական կազմակերպությունները, ինչպես օրինակ, «մուսուլման եղբայրները», Միրիայի առաջադիմության գլխավոր խոչընդոտն են:

Միրիայի կոմկուսի V համագումարը, ինչպես արդեն նշվել էր, դառնում էր, որ երկրում տեղի է ունեցել հեղափոխական պրոցեսի որոշ քննադատում: Ուստի, կոմկուսը հրատապ խընդիր համարեց վերադառնալ սոցիալական առաջադիմության ուղուն:

Հաշվետու դեկուցման մեջ ևս. Բազդաշը նշեց, որ դրա համար առկա են և՛ նյութական օբյեկտիվ հիմքը՝ պետական նախաձեռն ու սոցիալ-տնտեսական նվաճումները, և՛ սուբյեկտիվ հիմքը՝ ազգային առաջադիմական ճակատի կուսակցությունները, աշխատավորական դանդաղածները, սիրիական բանակը և, վերջապես, Միրիայի հայրենասիրական ազանգությունները¹³⁸:

Այժմ էլ Միրիայի կոմկուսն ու զենեկատական-հայրենասիրական մյուս ուժերը շարունակում են պայքարը իմպերիալիստական շրջանների մեթենալությունների և Բարալեի սոսնճությունների դեմ, ամրապնդում և խորացնում սոցիալ-տնտեսական նվաճումները՝ նախ ապահովելու Միրիայի վերադարձը սոցիալական առաջադիմության ուղուն, և այսպես թանալու սոցիալիստական կողմնորոշման հետագա զարգացման ուղիով, ուժեղացնում համագործակցությունն ու բարեկամությունը ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ:

**ԻՐՔԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՌԱՋԱԳԻՄԱԿԱՆ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՐԿՐԻ
ԳԵՄՈՎՐԱՏԱՅՐԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԿԱՆ ԱՌԱՋԱԳԻՄՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ՄՂՎԱՏ ՊԼԱՆՐԱՌՈՒՄ**

Հակաիմպերիալիստական ուժերի գործողությունների միասնության իրականացման խնդիրը միշտ էլ եղել է մեծում է Իրարի կոմունիստական կուսակցության (ԻԿԿ) պիսավոր սկզբունքներից մեկը։ Այն երկրի առաջին քաղաքական ուժն է, որը 1946 թ. առաջադրեց ազգային ուժերի միասնության ամրապահման ծրագիրը։

1968 թ. Տուլուսյան իրադարձություններից հետո, Իրարում իշխանության պիտի անցավ Բասս կուսակցության համեմատաբար ձախ թևը։ Նոր ղեկավարությունը հայտարարեց, որ զուտը գրա է բազիլ անցյալի պատմություններից, պատրաստ է ծախելու նրա ցավոտ ու հանցավոր էջերը՝ ի խնդիր առաջադիմական ու հայրենասիրական ուժերի համագործակցությանն։ Այն միաժամանակ հայտարարեց, որ Բասսը հրաժարվում է «ղեկավար», «միասնակ» և «սավանդարդ» լինելու նախկին լուրնգնեղիցը։

Փոփոխված իրադրությունները համապատասխան Նոր տակալիստի մշակմամբ զբաղվեց 1968 թ. հուլիսի 29-ին հրավիրված ԻԿԿ-ի Կենտկոմի արտահերթ յեւտը։ Հրապարակած հայտարարությունում կոմիտուր նախանշեց այն ուղին, որով պետք է ընթանաւ նոր ղեկավարությունը՝ ժողովրդական

պնդումների վտանգոթյանն արժանանալու համար։ ԻԿԿ-ը հրամայական պահանջ էր համարում.

- երկրում ղեկավարական կարգեր հաստատել,
- խաղաղ ու ղեկավարական ուղիով կարգավորել բրդական հարցը և Իրարի հանրապետության շրջանակներում նախաշէլ բուրդ ժողովրդի ինքնավարության իրավունքը,
- նավթարդյունահանության հարցում վերականգնել Իրարի իրավունքները,
- քացահայտել և ունչացնել րեստական օչախները, պետական ապարատը գտնի կասկածելի ու վատարուկ տարրերից,
- սովեղացնել պաշարը իմպերիալիզմի, սինիլիալի և արարական հետադիմության դեմ,
- ամրապնդել համագործակցությունը ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ։

Ակտեմբերին է կոմիտուր հրապարակեց «Ազգային ուժերի համագործակցության միասնական նախադի» խորտիսի նախադիծը, մի փաստաթուղթ, որը չեղիսյացվեց լայն հասարակայնությանը և ջերմ ընդունելություն գտավ ազգային առաջադիմական ու հայրենասիրական զանազան ջոկատների կողմից։

Սակայն Բասս կուսակցությունը, իր մանրրործական գրասկարգային կառուցվածքի պատճառով, վարում էր հակասական քաղաքականություն։ Այն մի կողմից իրականացնում էր հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական կուրս և մերձենում էր սոցիալիստական ու հեղափոխական միջազգային շարժմանը, իսկ մյուս կողմից երկրի ներսում վարում էր հակադեմոկրատական ու հակակոմունիստական քաղաքականություն։

1969 թ. հունվարի վերջերին ԻԿԿ-ն և Արարական սոցիալիստական շարժումը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որով քննադատեցին Բասսի մենիշխանությունը, այն դեպքում, երբ նա փոքրամասնություն էր կազմում և զրկում էր մեացած հայրենասիրական ուժերին ամենատարական ազատությունից։ Ծնման արարքը, — ասված էր հայտարարության մեջ. — կասկածի տակ է դնում Բասսի հույս-

կած սկզբունքները միասնական ձևկառի ստեղծման վերաբերյալ»²։ Հայտարարությունը միաժամանակ ժողովրդին կոչ էր անում պայքարել հանուն զեմտիրապետական ազատությունների նվաճման, միասնական ճակատի ստեղծման և կռախցիտն կառավարության կազմավորման։

Փետրվարի վերջերին ԽԿԿ օրգան «Փարիկ աշ-Շատբըր» կառավարող Բասա կուսակցությունը նախագրողապես նախատեսում էր առաջադիմական ուժերի նկատմամբ կիրառվող պառակտական քաղաքականության ծանր հետևանքներին։ Քննելով վերջապահին պահանջում էր իրականացնել ժողովրդական զանգվածների կամքը՝ ստեղծել առաջադիմական ազգային ճակատ և կազմել կռախցիտն հայրենասերական կառավարություն»³։

Իրաքի կոմկուսի և Բասաի ղեկավարության միջև երկար բանակցություններից հետո, 1969 թ. հուլիսի 30-ին ԽԿԿ կառավարությանը ներկայացրեց մի հուշագիր, որում հայտնեց շոշափված հարցերի անարդյունավետությունը։ Հուշագրում կային մի շարք հարցադրումներ, Բասար ինչպիսի՞ կարծիք ունի առաջադիմական ճակատի մասին, ո՞ր ուժերն ու կուսակցություններն են կազմելու ճակատը, Բասան, արդյո՞ք, հավատում է համահավասարության սկզբունքին, և վերջապես, Բասար հրաժարվում է «սովետադարձ կուսակցության» գրույթից, թե՛ ոչ։ Սակայն Բասար երկար ժամանակ լուռ մնաց։ Շարունակում էր լուսված մնալ բրդական հարցը։ 1969 թ. աշնանը սուր ուրվիթ կրկին բուրջ ապստամբների և իրաքյան բանակի զինված ընդհարումները Քրդստանում։ Մինչև տարվա վերջ իրաքյան կառավարությունը չհաջողեց քրդական հարցը կարգավորել զենքի ուժով, սուրի սկսեց միջոցներ ձեռնարկել խաղաղ կարգավորման ուղղությամբ։ Սահմանափակվեցին պատերազմական գործողությունները, զեկատներին հանձնաժողով կազմվեց՝ մշակելու քրդական հարցի զեմտիրապետական կարգավորման ամբողջական ծրագիր։

1970 թ. մարտի 11-ին Իրաքի հանրապետության պրեզիդենտ Ահմեդ Հասան Բաքրը հայտարարեց իրաքյան կառավարության և քրդական հեղափոխության ղեկավարության համաձայնության մասին բրդական հարցի խաղաղ ու զե-

մտիրապետական կարգավորման վերաբերյալ։ Դա Իրաքի արաբ և քրդեր ժողովուրդների առաջադիմական ու հայրենասիրական ուժերի անդույ պայքարի արգասիքն էր Արձագանքելով հույժ կարևոր այդ իրադարձությանը, «այ Այրաք»-ը գրում էր. «Համաձայնագրի կենսագործումը պահանջում է հեղափոխական ու զեմտիրապետական ուժերի կուս միասնությունն և սերունդ համագործակցությունը համաշխարհային հեղափոխական շարժման ու նրա ավանգարդ Սովետական Միության հետ»⁴։ Մարտի 11-ի ղեկավարացիայի կարևորագույն կետերից էին իրաքյան հանրապետության շրջանակներում ճանաչել քուրջ ժողովրդի ինքնավարության իրավունքը, որը պետք է կենսագործվեր լքու տարվա ընթացքում, քուրջ ժողովրդին իրավունք վերադառնել ժառանգելու երկրի օրենսդրական մարմիններին, քրդական շրջանում հողային բարեփոխություններ անցկացնել, զլուզացրելներին համապատասխան ռզակատներ էր տալ և քուրջ ավատատերերին ապահովակացնել, վերանայել ժամանակավոր սահմանագրության որոշ հոդվածները՝ ապահովելու արաբ և քուրջ ժողովուրդների խաղաղ գոյակցությունը, ապահովել քուրջ ժողովրդի համեմատական ներկայացուցչությունը գործադիր իշխանության մարմիններում, խաղաղ կապիտալ ներդրումներով հողայ բրդական շրջանների արդյունաբերական ու կուլտուրական զարգացումը և այլն։

ԻԿԿ-ն չեմոքրեն պաշտպանեց այդ ղեկավարացիան, այն համարելով կարևոր հիմք քրդական հարցի խաղաղ կարգավորման համար։ Մարտի 11-ին Բաքրին հղած շնորհավորագրի մեջ ԽԿԿ գլխավոր քարտուղար Ազիզ Մուհամեդն ասում էր. «Սույն համաձայնությունը հեղափոխական համարձակ բայ լինելուց բացի, առաջադիմական ուժերի և կուսակցությունների միասնական ճակատի ստեղծման կարևորագույն հիմքն է՝ ի շահ՝ ծաղկուն, առաջավոր ու զեմտիրապետական Իրաքին»⁵։

Իր հիմնադրման առաջին իսկ օրվանից ԽԿԿ-ն անդույ պայքար է մղել մի կողմից արաբ ղեկավարների շովինիստական քաղաքականության, մյուս կողմից՝ քրդական ֆեոդա-

լական ավագանու և բուրժուազիայի ազդային նեղմտութիւնն և անշատողական տրամադրութիւններէ ղեմ: ԻԿԿ-ն խոշոր ավանդ ունի արաբ և բուրժ ժողովուրդներէ շրջանում ինտեր-նացիոնալիստական գաղափարախոսութիւն տարածման գործում:

Ներաւրասպան պատերազմի ավարտը լայն հեռանկարներ բացեց Իրաքի սոցիալ-անտեսական և բաղաբական զարգացման համար: Քուրդ ժողովուրդի ղեմ ուղղված դիմված գործադուլիւնները հակասում էին թե՛ արաբներին և թե՛ քրդերի շահերին: Կրանք 1961 թ. մինչև 1970 թ. պետական բյուջեից խլել էին ավելի քան 600 միլիոն իրաքյան դինար: Համաձայնութիւնը մեծ դեր խաղաց Իրաքի հակաիմպերիալիստական ու հակաիմպերիստական պայքարի ուժեղացման ուղղությամբ:

Համաձայնութիւնն անխափան կենսագործման համար ԻԿԿ-ն պահանջում էր լայն ղեմնկրատական ազատութիւններ տալ ժողովրդական զանգվածներին: «Մեր կուսակցութիւնը հավատացած է, որ քրդական հարցի լուծումը օրդանապես կապված է ղեմնկրատիայի հարցի հետ: Ուստի, մենք առաջ քաշեցինք Քիրաքին՝ ղեմնկրատիա, Քրդստանին՝ ինքնավարութիւն» կարգախոսը⁹:

Հարկ ենք համարում նշել, որ 1967 թ. սկսած ԻԿԿ-ն երկրում միակ քաղաքական ուժն էր, որ բարձրացրեց քրդական հարցի խաղաղ ու ղեմնկրատական կարգավորման լուծուցը: Ազգային ճնշման ամեն մի գրսեղումը հանդիպում էր կոմկուսի վճռական հակահարվածին: Կյանքի թղվւմ անցած այս ճնշա կողմնորոշումը հանդիպեց թե՛ Բասաի և թե՛ Քրդստանի ղեմնկրատական կուսակցութիւն (ՔԴԿ) քննադատութիւնը: Քրդական հեղափոխութիւնն նկատմամբ իր ունեցած բացասական վերաբերմունքից ճնշելով, Բասաը այն համարեց սխալ դիրքավորում: Իսկ ՔԴԿ-ն այնքան չհիմնորին չէր խրախուսում հարցի խաղաղ կարգավորումը: Կրա մասին են վկայում Քրդստանի և Իրաքի այլ շրջաններում կոմկուսի կազմակերպած համախոսականները, որոնք, սակայն, համարակի հանդիպել են քրդական հեղափոխութիւնն ղեկավարութիւնն ղի-

մադրութիւնը, մտնավանդ այն շրջաններում, որոնք գտնվում էին Երանց անօրինութիւնն ներքո:

Կոմունիստները շատ րան արեցին, որպեսզի ճնշված ազգի՝ քրդերի աշխատավոր զանգվածները տողորվին վտանգութիւնը ղեպի իրաքյան պրոլետարիատը, ի ղեմն կոմկուսի անսնելով ազգային ճնշման բոլոր ձևերի ղեմ պայքարող կայուն և աննկուն մարտիկի: Կրա հետ մեկտեղ կոմկուսն անհատորեն մարտնչում էր արաբ մանրբուրժուական նացիոնալիստների ղեմ, որոնք ազգային գտնութիւն էին սերմանում բանվորների միջավայրում: Կոմկուսը անդուր պրոպագանդում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքը: Զարմանալին այն է, սակայն, որ մինչև 1970 թ. մարտի 11-ի ղեկավարացիան, կուսավարող Բասաը, որպես միասնական նախատի ստեղծման նախապայման, կոմունիստներից պահանջում էր հրաժարվել քրդական հեղափոխութիւնից և կատապառնել այն ի հակաշիւ զրան, կոմկուսն իրաքյան կուսավարութիւնը և ՔԴԿ-ին կոչ էր անում բանակցութիւններ վարել քրդական հարցի խաղաղ կարգավորման նպատակով:

Իսկ երբ Բասան ու ՔԴԿ-ն հասան փոխհամաձայնութիւնն, երկրով մեկ սկսվեց հակակոմունիստական շարժում, պրոպագանդիստական մեքենան փողհարում էր Բասաի և ՔԴԿ-ի առաջատար ղեքը, անտեսելով մեացած բոլոր առաջադիմական ուժերի և կուսակցութիւնների գոյութիւնը: Պաշտոնական մամուլն իր էջերը հյուրընկալեցին տրամադրում էր կոմունիստների հասցեին ուղղված ամեն տեսակ բանասիրութիւնները: Կոմունիստները շատ շանք թափեցին իրենց դիրքի ու պայքարի վերաբերյալ ճշմարտութիւնը ժողովրդական զանգվածներին հասցնելու համար: Այսպես, 1970 թ. մարտի 23-ին ԻԿԿ-ի հրապարակած հայտարարութիւնը նախազգուշացնում էր Բասա կուսակցութիւնն ղիտակից տարրերին՝ ռզոն լինել իմպերիալիզմի և հետադիմական ուժերի հյուսած զավեհից, որոնք սնուցում են հակակոմունիզմի քաղաքակաւութիւնը, որն էլ, ի վերջո, խտրելում է ժողովուրդի մասնութիւնը¹⁰:

Մարտի 11-ի ղեկավարացիան բացառիկ առիթ էր ազգային առաջադեմական ճակատի ստեղծման համար:

Բաաս կուսակցության ազգային X համագումարը, որը տեղի ունեցավ 1970 թ. մարտի 1—10-ը, անհշան տեղ հասակացրեց ճակատի հարցին, իսկ որոշումներում մեծ տեղ տրվեց «ավանդարդ կուսակցության» դրույթին, մի դրույթը որը մերժել էր Բասաի IX համագումարը, կր դեռ չէր սասանել իշխանությունն Իրաքում (1967 թ.): Փաստորեն Բասաը պաշտոնապես մերժեց ազգային ճակատի ստեղծումը¹¹:

1970 թ հուլիսի 10-ին Բաաս կուսակցությունը, վերապես, հրապարակեց ազգային ճակատի ստեղծման վերաբերյալ իր զմիարևասանելի նախապայմանները՝ նախ և առաջ նա երկրի բոլոր քաղաքական ուժերից պահանջում էր իրեն ճանաչել որպես «հեղափոխական սոցիալ-դեմոկրատական ավանգարդային կուսակցություն», որով է փաստորեն մերժում էր համահամասարության սկզբունքը¹²: Դրանով իսկ Բասաը անտեսում էր միասնական ճակատի մասին Իրաքի առաջադեմական կուսակցությունների առաջ քաշած ծրագրերը՝

Ի պատասխան այդ նախապայմանների, ԻԿԿ օրդան «Թարիկ աշ Շաար»-ի վերլուծական հոդվածը բացահայտում էր Բասաի բացասական դիրքավորումը և նախազմում ճակատի ստեղծման ուղիները: Բասաը փորձում էր ստվեր զցել անգամ ճակատի գաղափարի վրա, որը, թեև թի կարծիքով պետք է հունձկու հարված հասցնեի իմպերիալիզմի շահերին Իրաքում, սակայն տանել իրաքյան ժողովրդի մղած պայքարը հանուն առջադեմական առաջադեմության¹³:

Սակայն Բասաը չէր կարող ամբողջովին վերազանայ նախկին կարգերին: Իրաքն արդեն այն չէր, ինչ մինչև 1969 թվականը: Բոլոր քաղաքական կուսակցություններն անցել էին 1958 թ. հեղափոխության բովով և նրանցից յուրաքանչյուրն իր համար դասեր էր քաղեր: Բաաս կուսակցությունը օբյեկտիվորեն շահադրույթած էր հակամիտերախտական և հակաֆեոդալական հեղափոխության հիմնական խնդիրներին իրականացումը: Հետևանքապես, դեռ սպառված չէր նրա

առաջադեմ դերը, համազգային խնդիրների լուծմանը մասնակցելու նրա ընդունակությունը: Ուստի, Բաաս կուսակցությունն սկսեց վարել նոր քաղաքականություն, որի միջոցով փորձում էր ժողովրդական զանգվածներին ենթարկել իր գաղափարական-քաղաքական ազդեցությունը:

1970 թ. հուլիսի 17-ին հրապարակվեց նոր, ժամանակավոր սահմանադրության տեսքը, որի համաձայն Իրաքը հռչակվեց «Ժողովրդա-դեմոկրատական հանրապետություն», որի ղլխավոր նպատակն էր ստեղծել արարական միասնական պետություն և կառուցել սոցիալիստական հասարակություն: Սահմանադրությունն ազգաբարձում էր խոտրել, մատուցել, խղճի, ժողովների, կուսակցությունների, արհմիությունների և այլ կազմակերպությունների ազատությունը:

Ինչ վերաբերում է սոցիալիստական շինարարության հարցին, ապա հայտնի է, որ Բաաս կուսակցությունը առաջ է քաշում, այսպես կոչված, «արարական սոցիալիզմի» գաղափարը, որը, որպես կանոն, սոցիալիզմի վերաբերյալ մանր-րույծության այն պատրանքների տարատեսակն է, որը փաստորեն բացառում է դասակարգային պայքարը: Այն, մերժելով պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, ձգտում է մանր-րույծությանի դիկտատուրային, որի ժամանակ կատարման գործին մյուս դասակարգերի ու հասարակական խավերի մասնակցությունը կրում է ձևական բնույթ:

Իրաքի բանվորների և գյուղացիների հեղափոխական պայքարը հաջող ղեկավարելու համար վճռական նշանակություն ունենին կոմունիստական կուսակցության ամբապնդումը և ճիշտ գծի մշակումը:

Այդ առումով մեծ երևույթ էր ԻԿԿ II համագումարը, որի նշխատանքներն սկսվեցին 1970 թ. սեպտեմբերին և տևեցին 8 օր: Համագումարի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը. կուսակցության ծրագրի նախազննքնարկում, փոփոխություններ կանոնադրության մեջ, Կենտկոմի հաշվետվության քննարկում և Կենտկոմի նոր կազմի ընտրություն:

Համագումարում ԻԿԿ Կենտկոմի հաշվետու ղեկուցմամբ

Տանգես եկավ Ա. Մուհամեդը, որը խոսեց միջազգային իրադրության բնորոշ գծերի, համաշխարհային կոմունիստական շարժման, կուսակցության գործունեության մասին 1967 թ. առերի ունեցած III կոնֆերանսից հետո քնկած ժամանակաշրջանում, արաբական ազգային-սպառազրակա շարժման ստանձնահատկությունները, մերձավորարևելյան պրորևմի կարգավորման և ներքին դրության մասին:

Համագումարը միահամուռ հավանություն տվեց Կենտկոմի բաղաբանական գծին և ստեղծելի գործունեությանը, Եշեց կուսակցության խնդիրները պրակտիկ տարիների համար:

Աբուհենտե համագումարը բնութային առավ կուսակցության ծրագրի հարցը: Գեռես III կոնֆերանսից հետո Կենտկոմը նախապատրաստել է կուսակցական կադրերի քննարկմանն էր ներկայացրել ծրագրի նախագիծն ու փոփոխված կանոնադրությունը:

Մրագիրը բաղկացած էր առաջաբանից և 15 դրոխներից: Այն հանրագումարի էր բերում Իրաքի ազատագրական-հեղափոխական շարժման անցած փուլը, կոմկուսի գործունեությունը սկզբնավորումից մինչև հաջվետո ժամանակաշրջանը: Մարտիում ծրագրում խոսվում էր կուսակցության մերձական նպատակի՝ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման մասին: Զարգացման ներկա փուլում նախատեսվում էր ազգային-զենոկրատական հեղափոխության հաջող ավարտումն ու անհավազ վերաճումը սոցիալիստական հեղափոխության: Այս բնագավառում գլխավոր հարցերից մեկը ազգային-առաջադիմական հայրենասիրական ճակատի ստեղծման հարցն էր: Կոմունիստները գտնում էին, որ ճակատը պետք է ստեղծվեր յուրաքանչյուր կուսակցության զագափաբաղաբանական լրակատար անկախության հիման վրա: Ինչ վերաբերում է առաջատար կուսակցության հարցին, ապա կոմկուսը գտնում էր, որ ժողովրդական զանգվածները լավագույն իրավաբան են որոշելու տվյալ կուսակցության ճիշտ բաղաբանությունը և աշխատավորության կենսական շահերին նվիրված լինելու ճակատի անդամների միջկուսակցական տարաձայնությունները պետք է կարգավորել բանակ-

ցությունների միջոցով: Կոմկուսը ճակատի անդամներին կոչ էր անում կազմել ազգային կուլիցիոն կառավարություն, որը կլինի ժողովրդական զանգվածների ձգտումների և նպատակների արտահայտիչը: Համագումարը երկրի բոլոր առաջադիմական ու հայրենասիրական ուժերին կոչ արեց հրավիրել ազգային կոնգրես՝ քննարկելու ճակատի ստեղծման հարցը: Կոմկուսը միաժամանակ հավաստիացնում էր, որ Վեդային համագործակցության բաղաբանությունը տակտիկական թաղ չէ, այլ օրիկտիվ անհրաժեշտություն՝ համախմբելու առաջադիմական բոլոր ուժերը և կենսագործելու ազգային-զենոկրատական հեղափոխության խնդիրները¹⁴:

Մրագիրը պարունակում էր բաղաբանական դեմոկրատիայի ժամկետային բնութագրությունը, բացահայտում բուրժուական զենոկրատիայի զստակարգային ելույթներ և կեղծությունը: Այս բնագավառում կոմկուսը հրատապ խնդր էր համարում.

— Իսպառ ոչնչացնել արատոց և հետագան բոլոր օրենքները, որոնք մնացել էին նախորդ ժամանակաշրջանում:

— Սուլտանի ազգային-առաջադիմական կուսակցությունների, արհմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների լեզալ գործունեությունը:

— Ազգային հիմնարկ ժողով (պառլամենտ), օրենսդրական մարմիններ, բաղաբանային և դրուղական տեղական խորհուրդներ բնտեղյու նպատակով սահմանել զենոկրատական բնարական նոր կարգ, երաշխավորելով բնորոշների և բնորոշների լրակատար իրավունքները՝ քնդհանուր, հավասար և ուղղակի բնտրություններ, փակ քվեարկություններ:

— մշակել երկրի մշտական սահմանադրություն:

— Իրաքյան բրտանյան շրջանի համայն բնտրել օրենսդրական խորհուրդ և նրան վերապահել ինքնավար իշխանության բոլոր իրավունքները¹⁵:

Տնտեսական բնագավառում ծրագիրը գլխավորն ու վճարականը համարում էր երկրի ազգային տնտեսության անկախության ամրապնդումը, նալվային և ընդերքի մշտա հրտրտությունների ազատագրումը իմպերիալիստական մոնոպոլիա-

ների գերիշխանությունից, գյուղատնտեսության, արդյունաբերության, շինարարության, արանսպորտի հետագա զարգացումը, ժողովրդական տնտեսության ճիշտ ղեկավարումը և պրանավորումը (Այս և այլ կարևոր հարցերի վերաբերյալ կհետվի աշխատության համապատասխան տեղում):

Մրազում կարևոր տեղ էին զբաղում արարական միանությունը, պահեստիմյան հարցը, քրդական պրոբլեմը, բանակի հեղափոխական ղեմնորատական վերակառուցման, կոնանց ազատագրման, երեսօտարդության և ուսանողության զինակի և այլ հարցեր:

Իրաքի կոմունիստները աշխատավորական զանգվածներին տվեցին հեղափոխական պայքարի իրական հեռանկարներ և հաստատուն կերպով պաշտպանեցին նրանց առօրյա կարիքներն ու շահերը: Իրաքի բանվոր զատակարգը ի ղեմն կոմունիստների տեսնում է հավատարիմ բարեկամների և հուսալի ղեկավարների:

Կոմկուսի ազդեցության մեծացման երկյուղից զրոգված կառավարող բասականները երկրով մեկ սկսեցին հակակոմունիստական լայն շարժում: 1971 թ. հունվարի կեսերին Իրաքի, Սիրիայի, Հորդանանի և Լիբանոնի կոմունիստական կուսակցությունների խորհրդատուները խտրորեն դատապարտեց Իրաքում կոմունիստների և այլ առաջադիմական ուժերի նկատմամբ կիրառվող բռնությունները: «Հակակոմունիստիզմի գրեթե ունենալը Իրաքում միշտ էլ հասցրել են կառավարող շրջանների սնանկությանն ու մեկուսացմանը թե՛ արաբական աշխարհում և թե՛ միջազգային արևնալուծում»¹⁶, — կարդում ենք հայտարարությունում:

Միամտամանակ, հայտարարությունը Իրաքի ղեկավարներին կոչ էր անում վերջ տալ հակազեմնորատական միջոցառումներին, կենսագործել մարտի 11-ի ղեկլարացիան, իմ պերիալիզմի, սինիզմի և հետադիմության մեթոդաբանությունները ղեմնորատվելու համար ստեղծել ազգային առաջադիմական ճակատ:

Սակայն իրաքյան իշխանությունները շարունակեցին

Արաբկալուսները և իրենց գաղափարաբանությունները կոմունիստներին և այլ ղեմնորատական ուժերին նկատմամբ Այլ առթիվ արաբական առաջադիմական կուսակցություններին ու հայրենասիրական ուժերին ներկայացուցիչները ուղերձ հղեցին Իրաքի պրեզիդենտ Բաքրին, որտեղ ասված էր. «Իրաքի նախկինառններին կհաստատմբ կիրառվող անմարդկային վերաբերմանը ոչ միայն սոսնճություն է մարդու ամենատարրական իրավունքներին, այլև վերահաս մտանց է թե՛ Իրաքի և թե՛ ողջ արաբ ազգի համար»¹⁷:

Ամենախիտա ճնշամիջոցների պայմաններում Իրաքի կոմունիստներն ու ղեմնորատները անձնագործարար պայքարում էին հանուն երկրի ղեմնորատականացման: Եվ շնայած նրանց զովարություններին ու անհաջողություններին, նրանք են ի վերջո որոշում Իրաքի զարգացման մայրուղին: Հասարակության զարգացման արմատական պահանջները, բանվորների և գյուղացիների կենսական շահերը հրամայարար պահանջում էին ամենից առաջ վերափոխել կառավարող Ռասսակուսակցության քաղաքականությունը: Աճած հեղափոխական շարժման ազդեցության տակ, Բասսի և ՔԿԿ-ի փոխարարություններին լարվածության պայմաններում, բասական կառավարությունը ստիպված եղավ դիզել:

1971 թ. նոյեմբերի 15-ին Իրաքի պրեզիդենտ Բաքըրը պարսկեց Ազգային զորմունության խարտիայի» նախագիծը, որտեղ սահմանված էին Իրաքի զարգացման սովյալ փուլի ընտյվը և հիմնական խնդիրները: Նախագիծը երկրի քաղաքական կարգը համարում էր օանցման փուլ ժողովրդագնակրատական կարգից դեպի արաբական սոցիալիստական ղեմնորատական միաբանական հասարակարգը: Քաղաքական կարգը, ըստ նախագծի, սպահնում էր բոլոր տեսակի ղեմնորատական սպառնությունները, այլ թվում՝ քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, մամուլի, խոջնի և այլն: Նախագծին հատուկ էր հակա-իմպերիալիստական, հակակապիտալիստական և հակա-սպատարիական ուղղվածությունը: Այն կոչ էր անում ուժե-

ղացնել պաշարը իմպերիալիզմի և սիոնիզմի դեմ, ամբար պնդել համագործակցությունը սոցիալիստական երկրների և առաջին հերթին ՄՍՀՄ-ի հետ: Այն նախատեսում էր սոցիալատնտեսական վերափոխությունների առաջադիմական կուրս և սկզբնորոշման մերժում էր զարգացման կապիտալիստական ուղին: Նախագիծը վերախախտվեց Կոմկոմիտեի քրդական հարցի խաղաղ ու ղեմնորատական կարգավորման անհրաժեշտությունը և պահանջում բառ ամենաչին կենսագործել մարտի 11-ի դեկլարացիան: Նախագիծում խոսվում էր ազգային նախարի ստեղծման օրենսդրվ անհրաժեշտության մասին. սկզբային առաջադիմական շարժման տարրեր չոկատների միասնությունը պետք է խարսխել իմպերիալիզմի, սիոնիզմի և հետադիմության դեմ մղվող պայքարի ուժեղացման հիմքերի վրա, պահանջելով ղեմնորատական ազատությունները ժողովրդական ղեմավանդների քաղաքական, հասարակական արձիտվեանական և կուլտուրական հիմնարկների համար»¹⁹:

1967—1974 թթ. կրանանի արդյունաբերության մեջ նկատվեցին որոշ տեղաշարժեր¹⁸: Որոշ շափով աճեց արդյունաբերության բամբիք ազդային եկամտի մեջ¹⁹: Եթե 1965 թ. այն տալիս էր ազդային եկամտի 13%-ը միայն, ապա 1973 թ. 1974 թվականներին²⁰ համապատասխանաբար 15 և 16,7%²⁰:

Արդյունաբերության զարգացման հետ միասին շոշափին տեղաշարժեր արձանագրվեցին բանվոր դասակարգի թափանկական և որակական կառուցվածքի մեջ: կրանանի աշխատավորական զանգվածների կառուցվածքի մասին գոյություն ունեցող միակ պաշտոնական վիճակագրությունը հրապարակվել է 1972 թ.²¹ Բնյուսի վիճակագրական կենտրոնական զբաժնյակի կողմից:

կրանանում աշխատավորության թիվը կազմում էր մոտ 572 հազար մարդ, այսինքն՝ բնակչության 20—25%-ը: Բանվոր դասակարգի թիվը հասնում էր 390,139-ի, որից մշտական գործավորներ՝ 203,265, օրավաճառ աշխատողներ՝

18,680, ընտանիքի օժանդակող անդամներ՝ 35,670, գործազուրկներ՝ 20,940, ուրիշներ՝ 11,584: Այս թվերին պետք է ավելացնենք 100,000 շրջիկ և սեղոնային՝ շինարարության, երկրագործության և արանսպորտի աշխատողներ²¹:

Մանր էր աշխատավորական զանգվածների վիճակը: նշված ժամանակաշրջանում սովորական երևույթ էին դարձել բանվորներին թմահամ ձեռով աշխատանքից ազատելը, հարկադրաբար գործից բացակա աշխատողներին օրավաճառ զրկելը, աշխատավորակի նվազագույն շափի վճարումը, աշխատածամերի ավելացումը՝ մինչև 10 ժամի և այլն:

կրանանի բարձրագույնագրաստիական կարգի բացասական հետևանքներն ավելի ակներև էին գյուղատնտեսության բնագավառում: նախկին խոշոր կալվածատերերի սովոր մասը հանգիստում էր նօրաստեղծ հողային բուրժուազիայի հիմքը: Ֆեոդալական ու կապիտալիստական արտադրահարաբերությունների միահյուսումը առաջ բերեց դյուրական բնակչության շահագործման ստավիլ դասն ձևեր:

Գյուղատնտեսության մեջ մինչև 1970 թ. զբաղված էր տնտեսական ակտիվ բնակչության 45,36%-ը²²: Սակայն հետագայում գյուղից թաղաք արտահոսքի պատճառով այդ թիվը հասավ 19%-ի²³: Տարեցտարի նվազում էր նաև գյուղատնտեսությունից ստացվող ազդային եկամտի բամբիքը: 1948 թ. այն կազմել է 20%, 1954 թ.²⁴ 18%, 1965 թ.²⁵ 15%, 1970 թ.²⁶ 12%²⁶:

կրանանի տարածքը կազմում է 1007201 հեկտար: Գրանցից մշակվում էր 273390 հա, որից միայն 60 հազար հա ոռոգվող: Նամ ու խոպած 256311 հա հողատարածություն կարելի էր յուրացնել, որը մեծ չափով կրարելավեր երկրի տնտեսական վիճակը²⁵:

Գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոչընդոտները էր հողային տարածությունների համակենտրոնացումը մի բուս խոշոր ֆեոդալ-կալվածատերերի ձեռքում: կրանանի պայմաններում սակավահող գյուղացի էր համարվում 1—10 դոնում, մանր՝ 10—30, միջակ՝ 30—50, հարուստ՝

50—200, խոշոր կալվածատեր՝ 200-ից ավելի գոնում ունեցողը:

Կիրանների գյուղատնտեսության մինիստրության 1966 թ. ավալանքով, 68110 սակավահող և մանր գյուղացիներ, որոնք կազմում էին հողատերերի 80,7%-ը, տիրում էին ընդհանուր մշակելի հողատարածության 27,5% միայն: 12656 միջակ գյուղացիների բաժինը 15,7%-ը էր, 10294 հարուստ հողատերերին՝ 28,3%, իսկ 1743 խոշոր կալվածատերերին, որոնք կազմում էին բոլոր հողատերերի միայն 1,3%-ը, տիրում էին 28,5%-ին, այսինքն՝ ավելի շատ հողատարածության, քան ազքատ և մանր գյուղացիները՝ միասին վերցրած²⁶: Խհարկն, տվյալներից դուրս էին մնացել հողագուրի գյուղացիները և գյուղատնտեսական բանվորները, որոնք կազմում էին գյուղացիության 44%-ը²⁷:

Կիրանանք Վերորդ աշխարհին այն երկրներից է, որտեղ կառավարությունը համարյա ոչ մի միջոցառում չի ձեռնարկել ազդարարյին հարարերությունների կարգավորման ապարեղում: Երկրում գոյություն ունի որևէ օրենք, որ սահմանի շահագործվող գյուղացիության և շահագործող ֆեոդալ-կալվածատերերի փոխհարաբերությունները: Գնեևս կիրառվում են վարձակալման այնպիսի ձևեր, ինչպիսիք են մարբաան՝ քառորդային, երբ գյուղացին ստանում է րեբրի 1/4-ը, իսկ հողատերը՝ 3/4-ը և մունասֆան՝ կիրարությունը: Այս ամենը պատճառ դարձավ բազմաթիվ ազքատ, մանր և միջակ գյուղացիական տնտեսությունների բաշքայման, որոնք պարտքերից ազատվելու համար հաճախ իրենց հողատերերը զիջում էին կալվածատերերին կամ վաճառում վաշխատուներին և դառնում կրտսարոշխտարներ:

Մինչև 1971 թ. գյուղատնտեսական արտադրանքը տեղաբալի մեջ էր, իսկ դրանից հետո սկսեց նվազել: Այսպես, այն 1971 թ. կազմել է 766 մլն, 1972 թ.՝ 582 մլն, իսկ 1973 թ.՝ 562 մլն լիրա²⁸:

1972 թ. տեղի ունեցավ Կիրանանի կոմիտեի III համագումարը, որի ընդունած ազդարարյին ծրագրում առաջ էր քաշ-

վում հողային հարքը լուծելու վճահան պահանջը: Հողային արմատական բարեփոխությունների իրականացման նպատակով կռիվուք խնդիր էր դնում:

1. Սահմանել հողատիրության առավելագույն չափ՝ հաշվի առնելով հողակտորի արգավանդությունը, շահագործման ձևերը, շուկայից մոտիկ կամ հեռու լինելը:

2. Բռնագրավել բոլոր այն հողատարածությունները, որոնք գտնվում են անզալան և օտարերկրյա կապիտալի տնօրինության ներքև և որոնք հափշտակել էին գյուղացիներից՝ պարտքերի բարձր տոկոսների զիմաց:

3. Սահմանել առաջադիմական հարկ մամանակակից այն տնտեսությունների նկատմամբ, որոնց սեփականությունը թիչ է գերազանցում սահմանված առավելագույն չափը:

4. Բաժանել բռնագրավված հողատարածությունը հողագուրի, սակավահող գյուղացիներին և գյուղատնտեսական բանվորներին՝ անփոխհատույց և սեփականատիրական իրավունքով: Նույնպես հաշվի առնելով հողի արդյունավետության հանգամանքները: Հող ստացող գյուղացին ենթարկվում է հարկի, եթե նա առաջին տարին չմշակի այն, հաջորդ տարին նա է վերցվում, ժամանակակից տեխնիկա գործածող խոշոր տնտեսությունները ոչ բաշխվելու են և ոչ էլ մանրաբաժանվելու, այլ օգտագործվելու են որպես պետական կամ կոոպերատիվ տնտեսություններ:

5. Հող ստացող գյուղացիներին արմազարել վարի, սերմացու, տեխնիկա և ուտղման անհրաժեշտ միջոցներ՝ տպահովելու համար առավել արդյունավետ արտադրանք:

6. Պաշտպանել մանր ու միջակ հողատերերին կապիտալի ներգործությունից և նրանց ցույց տալ անհրաժեշտ օգնություն:

Ծրագրում համապատասխան լուծումներ էին առաջադրվում գյուղացիության համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի խնդիրների համար, ինչպես գյուղացիների կենսական շահերի պաշտպանությունը, սոցիալական ապահովագրությունը, գյուղատնտեսության տարերային զարգացման

արգելակումը, խամ ու խապան հողերի յուրացումը, գյուղատնտեսական արտադրանքի բարձրացումը, բոսոզման սխառմի սանձղծումը, ժամանակակից տեխնիկայի կիրառումը, անասնապահության զարգացումը, գյուղատնտեսական մրվերքների իրացումը շուկայում և այլն²⁹:

Լիբանանի կառավարող ֆինանսական օլիգարխիան հաստատրանում էր, որ տնտեսության բարգաւաճման ցայտուն ապացույց է պետական բյուջեի աճը: Այն 1973 թ. կազմել է 1199, 5 մլն, 1974 թ.³⁰ 1385 մլն³⁰, 1975 թ.³¹ 1986 մլն լիրա³¹:

Այժմ տեսնենք, թե ուճեցրած այդ բյուջեները ինչպես էին բաշխվում: 1974 թ. պետական բյուջեի առաջին և երկրորդ մասերը, որոնք ոչ արտադրողական մասեր էին, ընդգրկում էին նրա 83% -ը: Առաջին մասը, որ հատկացվում էր պետական վարչամեքենային, կազմում էր 821 մլն լիրա կամ ամբողջ բյուջեի 67% -ը: Երկրորդ մասը, որը հատկացվում էր, այսպես կոչված, ստորական կառույցներին և սարքավորումներին կազմում էր 190 մլն լիրա կամ 16% -ը, որից 47 մլն՝ պաշտպանության մինիստրությանը, 14 մլն՝ ներքին գործերի մինիստրությանը, 3 մլն. միայն պետական զարգացման, 18 մլն՝ գյուղատնտեսության մինիստրությանը, իսկ արդյունաբերությանը՝ ուլիշէ: Բյուջեի երրորդ մասը՝ 215 մլն կամ 17% -ը հատկացվում էր հեռանկարային ծրագրերի իրականացմանը: Այստեղ նույնպես երևում էր պետության վարած բազարականության անհետանկարային ընտրվելը: Այն դեպքում, երբ պաշտպանության մինիստրությանը դարձյալ հատկացվում էր 70 մլն, լուսավորության մինիստրությանը՝ 44 մլն, աշխատանքի մինիստրությանը 76 մլն լիրա, աղքատնաբերության, գյուղատնտեսության և շինարարության մինիստրություններին այս մասում ոչ մի հատկացում չկար³²:

Պետական բյուջեի 70% -ն ապահովում էին անուղղակի հարկերը, որոնց ծանր ընտր հիմնականում ընկնում էր աշխատավորական զանգվածներին ուսերին, մինչդեռ բյուջետային ուղղակի հարկերը կազմում էին ընդամենը 25—30%³³,

Լիբանանի կոմկուսը և բոլոր առաջադիմական ուժերը միասնաբար հանդես էին գալիս հարկային քաղաքականության դասակարգային կողմնակալության դեմ: Նրանք պահանջում էին երկրում կիրառել մեկ միասնական՝ պրոգրեսիվ հարկի սխեմանը:

Վարչակառույցի գաղափարապետներին օգտագործում էին այն թույլ փաստարկը, որ Լիբանանի ազգային եկամուտը տարեց-տարի աճում էր և որ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը ավելի բարձր էր, քան տարաբան մյուս երկրներում, բայց ստույգումը Բուվիյթի և Կատարի: Բերես այս ազնկարարության միակ ճիշտ կողմն այն էր, որ ազգային եկամուտը իրոք բարձրանում էր: Սակայն մեզ հետաքրքրում է այն հարցը, թե հասարակական-դասակարգային խմբերը ի՞նչ համահամունություն էին օգտվում դրանից: Պաշտոնական տվյալներով, 1967 թ. ազգային եկամուտը կազմել է 3483,3 մլն³⁴, 1972 թ.³⁵ 6365 մլն, 1975 թ.³⁶ շուրջ 9275,5 մլն լիրա³⁵: Այն բաշխվում էր հետևյալ ձևով: Բնակչության 18% -ը վաճելում էր ազգային եկամտի 60% -ը, իսկ մնացած՝ 82% -ին բաժին էր ընկնում միայն 40% -ը³⁶: Այս փաստը մերկացնում է վերևում նշված կեղծ պնդումը բարձր կենսամակարդակի սեփական: Այն ցույց է տալիս, որ բնակչության զերակշռող սեփականությունը ամենաբարձր զժվարելի պայքար էր մղում իր ապրուստը հայթայթելու համար:

Լիբանանում աշխատավորական զանգվածների ցածր եկամուտների և կյանքի արժեքի անհամապատասխանությունն պատճառով չարիքացնց վատ վիճակում էր գտնվում բնակարանային հարցը: Պաշտոնական տվյալներով 1975 թ. կարիք էր զգացվում 535 հազար սննչակի կամ 151 հազար բընակարանի³⁷:

Լիբանանի կոմկուսի և «Բանվորների ու ծառայողների արճմությունների ազգային միություն» 1974 թ. համասեղ ժողովը հանդես եկավ բնակավայրի իջնցման և բնակարանային շինարարության օրինազոյի վերափոխման օգտին: Ժողովի հիմնական որոշումներն էին.

1. Իշեցնել բոլոր տեսակի բնակարանների վարձք 25%-ով:

2. Հիմնել հատուկ ֆոնդ՝ վարկավորելու ժողովրդական բնակարանային շինարարությունը:

3. Արտոնել արձմիտիլյունների և բանվորական կոուպերատիվների, որպեսզի նրանք անձամբ շինանյութ ներմուծեն, առանց մաքսատուրք վճարելու:

4. Արձմիտիլյուններին և կոուպերատիվներին տրամադրել դրամական վարկեր խորհրդանշական չնչին տոկոսով՝ կոուպերատիվ բնակարաններ կառուցելու համար³⁰:

Բանվոր դասակարգի կրկնարտև անխոնջ պայքարի շնորհիվ կիրանանում 1946 թվականից գործում է աշխատանյութին օրենքը, որը լրացվեց 1971 թ. «սոցիալապահպան ապահովագրության» և 1973 թ. «սոցիալական ապահովագրության» օրենքներով: Ճիշտ է, նշված օրենքները բավականին թերի կողմից ունեին, սակայն կիրանանի կոմկուտի և «Բանվորների ու ծառայողների արձմիտիլյունների ազգային միության» մղած երկարատև պայքարը վճռական դեր խաղաց աշխատավորական զանգվածների պահանջների իրագործման ուղղությամբ:

1946 թվականից բանվոր դասակարգը անդուլ պայքար էր մղում աշխատանքային օրենքի հակաբանվորական 50-րդ հոդվածի դեմ, որն ձեռնարկատիրոջն իրավուք էր տալիս բանվորին, ծառայողին և պաշտոնային քմահաճորեն ազատել աշխատանքից: 1974 թ. առը պայքարը պսակվեց հաղթանակով և 50-րդ հոդվածը փոփոխության ենթարկվեց: Այդ առթիվ «Կանալը» գրել է. «Այն, ինչ ձեռք ձգվեցավ անցնող պարսի՝ կարևոր հազիվանակ մը կը հանդիսանա: Կը մնա զայն պահպանել, զարգացնել և օգտագործել՝ ի խնդիր նորանոր հաղթանակներու»³⁰:

Կիրանանի բանվորների ու ծառայողների արձմիտիլյունների ազգային միությունը բնագրվում էր 135 արհեստակցական միություն՝ 50 հազար բանվորով, այսինքն՝ աշխատավորական զանգվածների միայն 13%-ը³⁰: Բանվորական շարժման համախմբման ու կազմակերպման գործում խոշոր

նշանակություն ունեցան արձմիտիլյունների ազգային միության առաջին (1970) և երկրորդ (1975 թ.) համագումարները:

Աշխատավորների մեծ նվաճումներից էր, ինչպես նշվեց, 1971 թ. քնդունված օրենքը սոցիալապահպան ապահովագրության մասին: Աշխատավորները ձեռք բերեցին անպայքի իրավունքներ, ինչպես հիվանդության ժամանակավոր անաշխատունակության վարձատրություն, աշխատող հղի կանանց փոհհատուցումներ, բուժման և դեղորայք ստանալու հնարավորություններ և այլն³¹:

Կիրանանում սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր միտումը դասակարգային հակասությունների, ամենից առաջ՝ աշխատանքի ու կապիտալի միջև եղած հակասությունների սրումն էր: Վարչակարգի դեմ աշխատավորական զանգվածների ելույթներն աչքի էին ընկնում ոչ միայն մեծ թվով ու հարձակողական բնույթով, այլև հարաձուռ կազմակերպվածությամբ և պահանջների մտկոթողի բարձրությամբ: Հիմնականում զարգանալով աշխատանքի պայմանների բարելավման, աշխատավարձի բարձրացման, աշխատանժամանակի կրճատման, արձակուրդների, նպաստների ազիլացման և այլ լուծողների ներքո, աշխատավորական զանգվածային ելույթները ափելի ու ափելի հաճախակի էին ուղեկցվում բազմաբանական կոնկրետ պահանջներով:

Առանձնապես պետք է նշել բանվորների, գյուղացիների, առաջադեմ ուսանողների և մտավորականության 1969—1975 թթ. ծավալած բաղադրական և տնտեսական գոտեմարտերը, ինչպիսիք էին Բեյրութի «Ղանդուր» գործարանի բանվորության գործազուլը, Նաբատիայի ձխախոտագործների ելույթը, Սալպա բաղաբի ձկնորսների ցույցը, հարավի գյուղացիության բազում ելույթները, որոնք բնագրվեցին ափելի բան 170 գյուղ, կազմավորվեցին գյուղացիական կոմիտեներ և հրավիրվեց գյուղացիության համալիրանայան առաջին համագումարը: Իր արժանի տեղն ունի նաև Արձմիտիլյունների ազգային միության՝ 1974 թ. կազմակերպած համընդհանուր գործազուլը: Հիշատակության են արժանի նաև 1969 և 1973 թվականների պաղեստինյան հեղափոխության հետ համե-

բաշխութիան ցույցերը, որոնց յուրաքանչյուրին մասնակցել էր ավելի քան 250 հազար մարդ⁴²:

Վերլուծելով ժողովրդական լայն շարժման բնույթը, ԿԿ Կենտկոմի 1974 թ. լիազումար նիստը ընդգծում էր, որ «այդ պայքարի ընթացքում, բանվոր զասակարգի գլխավորությամբ, աշխատավորների հարված ուղղված էր ոչ միայն կառավարող բուրժուազիայի առանձին խմբերի, այլև պետական կապիտալիստական ամբողջ վարչակարգի դեմ»⁴³:

Դասակարգային պայքարի տրամաբանությամբ համապատասխան բանվորական ու զինվորական շարժման վերելքն ու նախաձեռնությունը, անխուսափելիորեն հանդիպում են հետադիմական ուժերի կատաղի դիմադրությանը: Եշխանությունն ավելի համախ էր դիմում կազմակերպված բռնությունների, որոնց մասին վկայում են 1969, 1973 և 1975 թվականների, իրադարձությունները, երբ փազանգավորական-շամոնական զորամիավորումները փորձեցին հաշվհարկար տեսնել հայրենասիրական առաջադիմական ուժերի և ՊԿԾ-ի ղեկաւնների հետ:

Վերը շարադրվածից հետևում է, որ Լիբանանի վարչակառույցի բազմաթիվ հակասություններից էին.

1. Հակասություն՝ արտազրահարաբերությունների և արտազրոգական ուժերի միջև, որը գրեթե անընդմեջ և անստուգիան բոլոր լծակներում առևտրա-ֆինանսական համակարգի արկայետությունը: Այդ հանգամանքը խոչընդոտում է արտազրոգական շուկայի, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը: Սա իր հերթին ծնում է մի կարևոր հակամարտություն՝ արդյունաբերական և գյուղական բուրժուազիայի և առևտրաբանկային բուրժուազիայի միջև:

2. Լիբանանի վարչակառույցի կախվածությունն իմպերիալիզմից սպասումով է նրա տնտեսական և քաղաքական անկախությանը: Այս հակասությունը որեց սոցիալ-տնտեսական և քաղաքական պայքարը ազգային առաջադիմական-հայրենասիրական և հետադիմական ուժերի միջև:

3. Կիսաֆեոդալական և կապիտալիստական արտազրա-

հարաբերությունների միահյուսումը գյուղատնտեսության մեջ առաջ բերեց մի նոր հակասություն՝ գյուղացիության և տիրապետող քաղաքական ուժի միջև: Դա հանդիքերց գյուղացիական դեմոկրատական շարժման աննախադեպ վերելքի:

4. Հակասություն լիբանանյան առևտրակոնվարդարական բուրժուազիայի և արաբական ազգային-ազատագրական շարժման միջև:

Ինչպես տեսնում ենք, առաջին և երրորդ հակասությունների լուծումը ենթադրում է քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական վերափոխություններ: Այնինչ երկրորդ և չորրորդ հակամարտությունների կարգավորումը մնում է ազգային-ազատագրական պայքարի շրջանակներում: Այսպիսով, ազգային-ազատագրական պայքարը միահյուսվում է ազգային զինվորատական պայքարի խնդիրների հետ:

* * *

1967—1982 թթ. սոցիալ-տնտեսական ճգնաժամի սրումով Լիբանանում դասակարգային ուժերի հարաբերակցությունը փոխվեց հզորտ առաջադիմական ու հայրենասիրական ուժերի: Նրանք սկսեցին վճռական զեք խաղալ քաղաքական կյանքում և երկրի ապագայի կանխորոշման գործում: Հետադիմական հարվածային գլխավոր ուժի՝ փազանգավորների օրգան «ալ Ամալ»-ը ինքնախոստովանության կարգով նշում էր, որ «պարետսիցիների գոյությունը Լիբանանում անհավասարակշռություն ստեղծեց, հատկապես այն ժամանակ, երբ նրան միացան հզորացած ձախ ուժերը»⁴⁴:

Նշված ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկը Լիբանանի ձախ ուժերի դիրքերի նշանակալից ուժեղացումն էր: Հարկ է ընդգծել, որ ԿԿ-ը մեծ զեք խաղաց ժողովրդական զանգվածային շարժման ղեկավարման քնազավառում:

Այսպիսի բարդ ու լարված պայմաններում անկեղավ գործում էր Լիբանանի կոմունիստական կուսակցությունը: 1968 թ. հուլիսին տեղի ունեցավ ԿԿ II համագումարը, որը

քննարկեց Վեռնայի հարցերը. 1. ԿԿ Կենտկոմի հաշվետվությունը. 2. ԿԿ ժրագրի նախագիծը. 3. ԿԿ կանոնադրության նախագիծը. 4. Կոստակցության կենտրոնական մարմինների ընտրությունը:

Կենտկոմի հաշվետվության մեջ և համագումարի որոշումներում ի մի բերվեցին առաջին համագումարից հետո անցած ավելի քան քսանհինգամյա ժամանակաշրջանում, կոստակցության գործունեության արդյունքները: Հաշվետվության մեջ արտացոլված էր կոստակցության պայքարը հանուն ազգային քաղաքական և տնտեսական անկախության, հանուն ժողովրդական զանգվածների կենսական շահերի իրականացման:

Համագումարը քննարկեց և ընդունեց կոստակցության կոնկրետ, գիտականորեն մշակված ծրագիրը, որը նոր փուլ նշանավորեց կոստակցության պատմության մեջ: Արագորք պատասխանում էր կրթությանի վարդապետական կարևորագույն հարցերին, արտահայտում էր բոլոր աշխատավորների բազմաթիվ ռեզոնանսները: Այն բաղկացած էր առաջարկներից և 7 զեռիներէից: Առաջարկում խոսվում էր կոստակցության վերջնական նպատակի՝ կապիտալիզմը սոցիալիզմով փոխարինելու մասին: Առանձին զեռիներում խոսվում էր արաբական ազգային-ազատագրական շարժման հիմնական սկզբունքները, կրթանակի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները, կոստակցության մերձավոր խնդիրների՝ ֆինանսական օլիգարխիայի իշխանության տապալման, ազգային ինքնուրույնության ամրապնդման, տնտեսական անկախության նվաճման, ֆեոդալական ու կիսաֆեոդալական անհավասարության բոլոր ձևերի ոչնչացման, կադիտալիզմի և կապիտալիստական զարգացման ուղու մերկայացման, աշխատավորության լայն զանգվածների շահերի պաշտպանության, զեմոկրատական հանրապետության ստեղծման և այլ կարևոր հարցերի մասին⁴⁶:

Կոմունիստական կոստակցությունը, պայքարելով համազանգվածային կոստակցության ամրապնդման ու ընդլայն-

ման համար, ընդգծում էր, որ դա պատմական անհրաժեշտություն էր պայահովելու կրթանակի զարգացումը սոցիալական առաջադիմության ուղիով: Սակայն ծրագիրը հավասարում էր, որ համազգային ու համազանգվածային խնդիրների իրականացումը անհնար էր առևտրաֆինանսական իշխանության պիրպետության պայմաններում: Դեկավարվելով ծրագրի այս հիմնադրույթով, ԿԿ-ն կոչ էր անում «տապալել ֆինանսական օլիգարխիայի իշխանությունը և ստեղծել ազգային զեմոկրատական կոստակցություն»⁴⁷:

Համագումարն իր որոշումներում ընդգծեց ազգային-առաջադիմական միտնական ճակատի ստեղծման անհրաժեշտությունը: ԿԿ-ի նախաձեռնությամբ առաջ քաշվեց այդպիսի լայն ճակատի ծրագրի նախագիծ: Գլխավոր նպատակն էր՝ պայքարել հանուն առաջադիմական ուժերի ժողովրդագիտակրատական կառավարության ստեղծման: Այդ կառավարությունը պետք է պատավորվեր իրականացնել սոցիալ-տնտեսական մի շարք խոր վերափոխություններ՝ հեղուս ժողովրդական լայն զանգվածներին, ամենից առաջ կոստակցության պետական ապարատը վերակառուցել զեմոկրատական հիմքի վրա, պետական հակոցության տակ զենլ մասնավոր, ներառյալ օտարերկրյա բանկերը՝ սահմանափակելու օտարերկրյա մոնոպոլիաների գերիշխանությունը, վարել հակահիմալերիստական քաղաքական կուրս, ավելի ակտիվորեն մասնակցել արաբական աշխարհին հուզող հարցերի լուծմանը, սերտ համագործակցություն հաստատել ՍՍՀՄ-ի և սոցիալիստական բնկերակցության երկրների հետ⁴⁸:

Համագումարը հաղթահարեց մի այնպիսի արգելք, ինչպիսին էր իմբալիանությունը: Կոստակցության պառակտված մասի վերաբերյալ բանաձևում համագումարը դատապարտեց կուրալիստ-Սավալա ձայն արկածախնդրական-օպորտունիստական խմբի հայացքները կազմակերպական և տակտիկական հարցերում: Համագումարը սուր քննադատություն հնթարկեց նաև զաղափարական-կազմակերպական աշխատանքում եղած թերությունները, ամենից առաջ՝ զե-

մոկրատական ցեներալիզմի, բննադատության և ինքնաբննադատության սկզբունքների խախտումը: Համագումարի որոշումներում ընդգծվում էր. «կուսակցության կազմակերպությունների պարտականությունն է՝ աչքի լույսի պես պահպանել մարքր-լենինյան տեսության անաղարտությունը, անհաշտ պայքար մղել մանրբուրժուական զազափարսխոսության ամեն տեսակ զրևերումների դեմ»⁴⁹:

Համագումարն ընդունեց նաև կուսակցության կանոնադրությունը, որի մեջ բնօրենքացմով էր երկարամյա պայքարի ընթացքում կուսակցության կազմակերպման փորձը: Կանոնադրությունը ներմու էր կուսակցության ծրագրի առաջադրանքներին և ազգային-զեմոկրատական խնդիրների իրականացման պահանջներին:

Լիբանանի կոմունիստները հայրենասիրական բոլոր ուժերի հետ միասին միտինգներ ու ցույցեր էին կազմակերպում, սեմինարներ անցկացնում, դասախոսություններ կարդում, զրույցներ անցկացնում գործադուլներին միասնության անհրաժեշտության և ակտիվ աշխատանքի մասին՝ օ պաշտպանություն միավորված ճակատի, բնզղեմ հետադիմական ուժերի, հանուն ղեմոկրատիայի ու սոցիալական առաջադիմության ուղիով Լիբանանի զարգացման:

Զգուհիով կասեցնել ժողովրդական շարժման բուռն գրոհը, Լիբանանի կառավարող վերնախավը հանդես էր գալիս ղեմոկրատական պատմության դեմ: Նա փախում էր հասարակարգի լիակատար ղեմոկրատացումից, չէր ցնցվանում իշխանություն սալ ժողովրդի շահերն արտահայտող ղեմոկրատական հայրենասիրական ուժերին, բնզ որում հիմնական հարվածն ուղղված էր կոմունիստներին, ինչպես նաև պաղեստինյան ղեմադրության շարժման դեմ: Գեռնըս 1969 թ. ապրիլի 23-ին լիբանանյան հետադիմական ուժերը փառաբանությունների զլխավորությունը փորձեցին մահացու հարված հասցնել թե՛ ՊԳԵ-ի բոկատներին և թե՛ ազգային հայրենասիրական ուժերին: Երկարատև ղեմված բախումներինց հետո վերջիններս հաղթանակով

զուրս էկան: Ամենալայն բարոյաբազաբական աջակցություն ցույց տալով ՊԳԵ-ին, կոմունիստները միաժամանակ խիստ բննադատեցին Լիբանանի ղեմոկրատական, հայրենասիրական ուժերի պայքարը ՊԳԵ-ի ղեկավարությունը լիովին ենթարկելու փորձերը, բնզղծելով, որ ռՊԳԵ-ի լիազորությունների ու պարտականությունների մեջ չի մտնում Լիբանանի սոցիալ-անտեսական և քաղաքական զարգացման խնդիրների լուծումը»⁵⁰:

Ապրիլյան ղեպերինց հետո, վեց ամիս տեւած կառավարական ճղեւժամայից զուրս գալու նպատակով, կառավարող վերնախավը ստիպված էղավ ղեմել ղեզումներու կազմվեց նոր կառավարություն, որի կազմում առաջադիմական հայրենասիրական ուժերի ներկայացուցիչ, առաջադիմական սոցիալիստական կուսակցության նախագահ Ք. Ջուբրաբը ստանձնեց ներքին գործերի մինիստրի պոստը: Նա բավականին վեռական ղեբ խաղաց Լիբանանում ղեմոկրատական ազատությունների բնզլայնման գործում: Երկարատե ու տրեւաչան պայքարինց հետո, 1970 թ., Լիբանանի կոմունիստական կուսակցությունը նվաճեց լեզայ գործունեության իրավունք: Կոմունիստներն իրենց զրևերեցին որպես համաշխարհային շահերի համար հետեղական մարտնչողներ:

Լիբանանյան կոմկուսի գործունեության համար ստեղծված նոր պայմաններում 1972 թ. հունվարի 7—10-ը գումարվեց ԼԿԿ III համագումարը: Համագումարի օրակարգն էր՝ 1) Կենտկոմի հաշվետու ղեկուցումը, 2) ազրարային ծրագրերի նախազիծը, 3) քաղաքական թեղիաների նախազիծը, 4) կուսակցության նոր կանոնադրության նախազիծը, 5) կուսակցական կենտրոնական օրգանների բնարտություն:

Համագումարում ԼԿԿ Կենտկոմի հաշվետու ղեկուցմամբ հանդես էկավ կուսակցության ղլխավոր քարտուղար Նիկոլա Շատին, ազրարային ծրագրի նախազիծը մասին՝ Կենտկոմի քաղբլուրյին անզամ Յ. Խ. Լիուն, քաղաքական թեղիաների նախազիծի մասին՝ Կենտկոմի քաղբլուրյին անզամ Քարիմ Մրուն:

Համազումարում ներկա էին Նյուրնբերգի կոմունիստական, բանվորական, ազգային-դեմոկրատական և ձախ սոցիալիստական կուսակցությունների ու կազմակերպությունների 83 պատվիրակություններ:

Համազումարի բաղաբան կենտրոնները բարձրացրել էին ԵՄԿԵՄԿ-ի ազգային դեմոկրատական վարչակարգի՝ Տոկ Նախապատրաստել սոցիալիզմի հաղթանակի համար՝ լողուն-աղբի Համազումարի ընդդեմ էր, որ Վրաստանի բազմազան և սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացումը և ժառանգած խեղդիները լուծելու կառավարող շրջանների անհաջող փորձերը կրկին անգամ Հավաստեցին կոմկուսի ծրագրի նշած ուղիների նշանարտացրությունը, արմատական վերափոխությունների անխուսափելիությունը: Այս նպատակին հասնելու համար Կոմկուսի III համազումարը գլխավոր նախապայման էր համարում «Ֆինանսական օլիգարխիայի տիրապետության տապալումը և ազգային դեմոկրատական պետության ստեղծումը»⁵⁰:

Կոմունիստական կուսակցությունն իրավացիորեն զրտեում էր, որ ազգային դեմոկրատական պետության խեղդիներն իրենց բնավորված բնավ սոցիալիստական չեն: Նման խեղդիների կենսագործման համար անհրաժեշտ էր ստեղծել ազգային առաջդիմական ուժերից բաղկացած կառուցիվոն կառավարություն, որը պետք է իրազորվեր հեռանալ մինիմալ ծրագրի, լուծարել նեմոսիկի օտարերկրյա մոնոպոլիստական քնկերությունները, թուլացնել ֆինանսական օլիգարխիայի տնտեսական դիրքերը, ազգայնացնել բանկային համակարգը և պահպանողական ընկերությունները, արտաքին առևտուրը կենտրոնացնել պետական հատվածի ձեռքում, դարգացնել և ընդլայնել ազգային արդյունաբերությունը պետական հատվածի անմիջական ղեկավարությամբ և համախառն մասնավոր ու պետական ձեռնարկությունների ստեղծման միջոցով: Կիրառել հողային բարեփոխություններ, ազգայնացնել խոշոր ֆեոդալ կալվածատերերի սեփականությունները, սահմանել հողատիրության առավելագույն

չափը, բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը:

Առաջարկվում էր բարելավել աշխատավորական ղանդակների կենսամակարդակը, բավարարել նրանց կուլտուրական, կրթական, առողջապահական և սոցիալական ապահովագրության պահանջները:

Կարևոր խնդիրներից էին համարվում դեմոկրատական ազատությունների պահպանումը, աշխատանքի, մասնագիտի, իրենց, կուսակցություններ ու արհմիություններ կազմակերպելու իրավունքը: Սահմանադրության վերափոխումը, որը կապահովի բաղաբանների իսկական ազատությունն ու կազմադրանքի մարդկային արժանապատվությունը: Ընտրական նոր օրենքի զրկաբարումը՝ հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հաստատմամբ, զազտնի քվեարկությամբ, դրամական ցենզի և այլ արգելիչների վերացմամբ:

Նրտարին բաղաբանությունն բնագավառում խեղդի էր դրվում վարել հակամոսկոլիստական անկախ բաղաբանություն, սերտ համագործակցություն հաստատել արաբական առաջադիմական կարգերի հետ, բարձրացնել Վրաստանի պաշտպանականությունը՝ հեռվելով սոցիալիստական երկրների և ՍՄՄ-ի ազամական օպոնիստական վրա: Օրինք հապարակել պարտադիր զինծառայության վերաբերյալ և դինել սահմանափակ գյուղերի բնակչությունը: Ընդլայնել կրթականի համագործակցությունը սոցիալիստական երկրների և, առաջին հերթին, ՍՄՄ-ի հետ, նպատակ ունենալով ազատագրվել համաշխարհային կապիտալիստական առևտնություն աղիկությունից⁵¹:

Սա հարուստ և զիտանկալորեն հիմնավորված մարքսիստական մի ծրագիր էր, որով կոմունիստական կուսակցությունը կարող էր իրավամբ հպարտանալ:

Կիրանանում ազգային հայրենասիրական ուժերի և ՊԳԵ-ի դիրքերի ամրապնդման ուղղությամբ խոշոր նշանակություն ունեցան նաև 1973 թ. մայիսի 1-ի իրազարկությունները, երբ լիբանանյան իշխանությունները դարձյալ փորձե-

ցին լիվիդացնել ՊԳԵ-ի հեռակետերը: Անհաղորդության մասունված այս փորձը մի կողմից ամբաստանեց պաշտասիր-ցիները որպէս բազաբազական հեղինակությունն ու ներկայա-քյունը երկրում, իսկ մյուս կողմից՝ դեմոկրատական հայրե-նասիրական ուժերն առավել ազդեցիկ դիրք գրավեցին Ռաշիդ Սուլէյ նոր կարիներում:

Երկրի նշանաժամային իրադրությունն և ժողովրդական շարժման վերելքի պայմաններում բազաբազական մեծ կարեւ-րություն ունեցան 1974 թ. մարտի 27-ի կազմակերպված հա-մաժողովրդական ցույցը և կոմկուսի հիմնադրման 50-ամյա-կին նվիրված տոնակատարու-թյունները:

Հայտնի է, որ բանվորական շարժումը պառակտելու, նրա շարքերում խառնաշփոթությունն առաջացնելու նպատա-կով բուրժուազիան օգտագործում է, այսպես կոչված, բան-վորական բյուրոկրատիան: Ի պատասխան նման փորձերի, կիրանանի բանվորներին և ծառայողներին ազգային միությունը կոչ արեց 1974 թ. ապրիլի 2-ին համընդհանուր գործադու-անցիկացնել: Միութեան աջակողմյան որոշ ղեկավարներ փոր-ձեցին վիժեցնել այն: Հակաբանվորական այս քայլի դեմ մարտի 27-ին զանգվածային հողը ցույց ծավալվեց (30 հա-զար մարդ), անպիսի մատչաբար, որ չէր եղել 1946 թ. ընդ-հանուր գործադու-անցիկ ի վերջ: Կոմկուսի գնահատմամբ, դա-սակարգային մեհամարտի հետեանքով կիրանանում արժ-մեութենական ու բանվորական շարժման մեջ բացահայտ տե-ղաշարժ է նկատվում դեպի ձախ⁵²:

Կոմկուսի հիմնաժամակի տոնակատարությունն ավելի սարսափեցրեց կառավարող վերնախավին: Այն ցույց տվեց, որ բանվոր գաղտնաբերի ամանգարդ կուսակցությունն իր ակ-տիվ պայքարի շնորհիվ նվաճել է ժողովրդական զանգված-ների վստահությունը: Ժողովրդական լայն զանգվածների ակտիվ մասնակցությունն այս տոնակատարությանը ոչ միայն հաստատում է նրանց պաշտպանությունն ու համե-րաշխությունը կուսակցության ծրագրին ու բաղաբազական գծին, ալլև նրանց պատրաստակամությունը՝ ներքրավելու աբ-

մատական հեղափոխական վերափոխման համար մղված պայքարին⁵³,—կարգում ենք ԿԿ IV համագումարի փա-տաթղթերում:

Սակայն դեպքերի հետագա զարգացումն այլ բնույթ ստացավ:

1975 թ. կիրանանի աջակողմյան առավել հետադիմ-կան ուժերը, փրդանգավորների գլխավորությամբ, սանձա-կերծեցին դիվիզիոն բախումներ ազգային-ստաբազիական ուժերի և նրանց զանչակնց ՊԳԵ-ի դեմ: Երկրում սկիզբ առավ բազաբազիական պատերազմը, որը ծանր հատեց կիրանանի վրա՝ տասնյակ հազարավոր զոհեր,՝ հարյուր հազարավոր վիրավորներ և ահեղի նյութական վնասներ⁵⁴:

Անդրդառնալով բազաբազիական պատերազմի հա-զուցային հարցերին, Ն. Հ. Հովհաննիսյանը «կիրանանա-յությունը ծանր փորձություն առջև» հողվածում նշում է. «Առաջդիմական հայրենասիրական ուժերը հանդես են գա-լիս կիրանանի պետական կառուցվածքի մեջ փոփոխություն մտցնելու և իշխանութեան հարցում մարտի համայնքի մե-նախորդության վերացման, բուրժուական պառլամենտարիզմի սկզբունքների հետեղական կիրառման, աշխատավորական զանգվածների իրավունքների բեղաբլման, պագետախնդր-ներին աշակցություն ցույց տալու, արտաքին բազաբազա-նությունը քնազավառում պրոպրեմաշայն կուրսից հրժար-վելու և արարական երկրների հետ սերտորեն համագործակ-ցելու պահանջներով⁵⁵»:

1979 թ. հուլիսին կայացավ ԿԿ IV համագումարը: ԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ կուսակցու-թյան նոր դիվալոր բարտուղար Ժորժ Հաուին: Հաշվետու-թյան մեջ տրվեց միջազգային և ներքին դրությունն բազմա-կողմանի վերլուծությունը, հանրագումարի բերվեցին բա-զաբազիական պատերազմի տարիներին կուսակցության գոր-ծունեությանն աղբյուրները, որոշվեցին հրատապ խնդիրնե-րը և կուսակցության բազաբազական դիրքը:

Հաշվետուությունը նշեց, որ կիրանանը եղել և մնում է իմպերիալիստական ծրագրերի նպատակակետը՝ իրականաց-

նելու մերձավորությունը կոնֆլիկտի էսպիտուլյանտական կարգավորումը: Այդ ծրագրի իրագործումը, նշում էր հաշվետվությունը, ընթանում էր երկու ուղղությամբ. վերացնել ծրագրի իրականացման ձանազարհի նդով ամեն տեսակ պրոպագանդա, հատկապես պաղեստինյան դիմադրական շարժումը ու կրթանանի հայրենասիրական ուժերը, ճնշում գործադրել Սիրիայի վրա և ապա կրթանանի վերածել ամերիկա-խորաշխարհյան կարգավորման շրջանի երկրորդ ռալկի⁵⁰:

Հաշվետվությունը, խոր վերլուծություն կենթարկելով լիբանանյան կոնֆլիկտի ներքին և արտաքին գործոնները, ընդգրկում էր նրա օրգանական հասցը արարական իրագործության հետ. «Սկզբից եկե՛ք պարզ է, որ գոյամարտը երկար է լինելու, որովհետև իմպերիալիստները որոշել են ամենակատարի գրոհ կազմակերպել ոչ միայն լիբանանյան հայրենասիրական ուժերի և պաղեստինյան հեղափոխության նվաճումներին, այլև համարարական ազգային-ազատագրական շարժման վերելքի դեմ»⁵¹:

Այս կենտրոնի հաշվետվությունը լիբանանյան քաղաքացիական պատերազմը բաժանում էր հետևյալ հիմնական փուլերի.

Առաջին փուլը՝ 1973 թ. ապրիլի 13-ից մինչև 1976 թ. փետրվարի սասամանագրական փաստաթուղթը⁵²: Սկզբնական շրջանում զգալի հաջողությունների հասան աչելը, որոնք հենց իրենք էին սանձաղիթել պատերազմը: Աչելը միավորվեցին, այսպես կոչված, «կրթանանյան ձևկատում», որի զխավոր հարվածային ուժը փաղանգավորներն ու շամուհականներն էին:

Մեկ այլ, 1976 թ. սկզբներից հայրենասիրական ուժերին հաջողվեց փոփոխություն մտցնել պատերազմի ընթացքի մեջ: Նրանք միավորվեցին և կազմեցին «Ազգային շարժում», որի մեջ մտան ԱԿ-ը, Կոմունիստական գործունեության կազմակերպությունը, Սոցիալիստական առաջադիմական կուսակցությունը, Սիրիական ազգային-սոցիալական կուսակցությունը, նասալականները, Բասս կուսակցության լիբա-

նանյան մասնաճյուղը, «Ամալ» շիական կազմակերպությունը և այլ հայրենասիրական ուժեր: Ազգային շարժումը որակական նոր աստիճանի բարձրացավ. երբ Ք. Ջուրջատի ղեկավարությամբ կազմավորվեց Կենտրոնական քաղաքական խորհուրդը⁵³:

Նշված մասնակաճատվածում հետադիմությունը լուրջ պարտություններ կրեց, իսկ նրա ղեկավարած քաղաքական կարգը թևակոխեց կրախի շրջան: «Ազգային շարժումը պատերազմական գործողությունների քաղաքացման նախապայման էր համարում ոչ թե սոցիալ-անտեսական և քաղաքական վերափոխման ծրագրի իրականացումը, այլ ՊՊԵ-ի իրավունքների ճանաչումը կրթանանում: Ենելով պահի հատուկացած պահանջները, «Ազգային շարժումը» գտնում էր, որ «ամենակարևորը պաղեստինյան հեղափոխության պաշտպանությունն է, որովհետև վերափոխման համար մղված պայքարը կարելի է իրականացնել սոցիալ-անտեսական և քաղաքական պայքարի ամենատարբեր մեթոդներով»⁵⁴:

1976 փետրվարի մասնակազմվոր դինազադարեց հետո փոխզիջումների հիման վրա հոյակվեց, այսպես կոչված, «սասամանագրական փաստաթուղթ», որը թեպետ լիովին չէր արտահայտում գեմեղրատական վերափոխման վերաբերյալ հայրենասիրական ուժերի պահանջները, այնուամենայնիվ նախատեսում էր լիբանանյան կոնֆլիկտի կարգավորումը խաղաղ ճանապարհով:

Մեկ այլ, հետադիմության՝ ալ Ահդարի զխավորությանը մարտի 11-ին կազմակերպած ղյնվորական հեղաշրջումը վերացրեց այդ հնարավորությունը և սկիզբ դրեց ղյնված բախումների հետագա շրկացման:

Կենտրոնի հաշվետվությունը միաժամանակ բացահայտեց նշված փուլում թույլ տրված թեուությունները: «Ջանազան, հանգամանքների բերումով ՊՊԵ-ն ճիշտ տակտիկա չվարեց այս հարցում, իրեն վերապահելով վճուրդման իրավունքը թե՛ քաղաքական և թե՛ ոսպմական ասպարեղներում» — նշված է կրթանանյան կոմկուսի IV համագումարի հաշվետվության մեջ⁵⁵:

Ճգած լուրը Թերթյունների շարքին էին դասվում նաև «Ազգային շարժման» պաշտպանական՝ հարձակման նախաձեռնությունը մշտապես հակաազդերին թողնելու տակտիկան, մի բան, որ ծանր նստեց հայրենասիրական ուժերի վրա, մասնավոր Մեթնի շրջանում, երբ ձևափոխված քաղաքականությունը նշանակություն ուներ «Ազգային շարժման» համար: Որոշակի անհաշիվեկատ վերաբերմունք ցուցաբերվեց այն ուժերի նկատմամբ, որոնք դեմ էին մեկուսացալուների ծրագրերին, սակայն, «Ազգային շարժման» ուժերը տակտիկայի հետևանքով, շրջադրվեցին դոտմամարտերում:

Երբորդ փուլն ընդգրկում է «սամանագրական փաստաթղթի» հրատարակումից մինչև Ռիազում և Կահիրեում գումարված արարական երկրների զեկալարների կոնֆերանսը: Այն Ահգարի գինվորական կառավարության անկումից հետո, «Ազգային շարժումը» հարված հարվածի տակից հասցեում էր այդ ուժերին և սրղեն 1976 թ. կեսերին կրանանի տարածքի 82 տոկոսը գտնվում էր նրա հսկողության տակ:

Հանրապետության պրեզիդենտ Ս. Յրանժեբի հրավերով նույն տարվա հունիսին կրանան մասն սիրիական զորքերը, որոնց նպատակն էր, ինչպես նշված էր պաշտոնական հայտարարության մեջ, վերջ տալ եղբայրասպան պատերազմին: Եվն սկզբնական շրջանում որոշակի դրական արդյունքներ արձանագրվեցին այդ ուղղությամբ, սպա հետագայում փոխվեց ուժերի հարաբերակցությունը: կրանանյան փառերեսում սուր հակասություններ կ'այտ նկան մի կողմից «Ազգային ձևակառ» և ՊԳԾ-ի, մյուս կողմից՝ Սիրիայի միջև: Զինված բազմաթիվ բախումներ տեղի ունեցան վերոհիշյալ ուժերի միջև:

1976 թ. հոկտեմբերին Ռիադի և Կահիրեի կոնֆերանսներում որոշվեց արարական այլ պետությունների ուժեր ևս ուղարկել կրանան և կազմել միասնական խաղաղապահայան ուժեր, որոնց միջոցով փաստորեն սիրիական զորքերն էին Այդ ուժերը զրկվելիս նորնտիր պրեզիդենտ Ի. Մարգոֆ տրամադրության ներքո: Այս որոշումները համարելով բա-

ցասական, ԼԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ ընդգծված էին նաև մի շարք դրական պահեր, ինչպիսիք ևս արարական երկրների կողմից կրանանի տեքստորիալ ամբողջականության ձևափոխումը, նրա՝ արարական պատկանելության հռչակումը և, վերջապես, պաղեստինցիների իրավունքների վերահաստատումը բառ 1969 թ. Կահիրեի համաձայնագրին:

Հաշվետվության մեջ բարձր էր գնահատվում կրանանի «Ազգային շարժման» ստրատեգիական ընդհանուր գիծը, սակայն մատնանշվում էր, որ տակտիկական բազմաթիվ սխալներ թույլ տրվեցին: Դրանցից ամենազխտվածը էր «Ազգային շարժման» և Սիրիայի միջև առձանկատումը կանխելու ուղղությամբ անբաշխար շանքերի՝ գործադրումը: Եճկուն տակտիկայի կիրառումը, թևկուղև որոշ զիջումների գնով, կկանխեր այդ ցավալի բախումը»⁶², — ասված էր հաշվետվության մեջ:

Երբորդ փուլն ընդգրկում է արարական երկրների զեկավարների Կահիրեի ժողովից մինչև Սազաթի այցը Երաջել (1977 հոկտեմբերի 19-ը) ընկած ժամանակահատվածը: Այս փուլի սկզբնական շրջանում իրազեկությունը էականորեն փոխվեց: «Ազգային շարժումը», որոշակի անկում ապրելով, ստիպված եղավ ժամանակավորապես նահանջել: ձևակառի կենտրոնական դեկլարություն վարպետությունը դրսևորվեց այն բանում, որ ոչ միայն կարողացավ մանրան, զիջումների գիմել, այլև կազմակերպված ձևով նահանջեց հակառակորդի գերակառույ ուժերի հանդեպ: «Ազգային շարժումը» բաշ գիտակցում էր, որ աշերի և Սիրիայի համագործակցությունը կարճատև է լինելու: Ուստի, ինչպես շարժումը, այնպես էլ արարական կոմունիստական կուսակցությունները, նախազգուշացնում էին Սիրիային ծանր հետևանքների մատին: Եվ իրող, զեկպերի հետագա ընթացքը բացահայտեց աշերի իսկական նպատակների էությունը, նրանց ընդհանրությունը արարական հետազդիության, ԱՄՆ-ի և Երաջելի հետ: Ետով, Ետորայի համաձայնությունից հետո, սերտ համագործակցություն հաստատվեց Սիրիայի, «Ազգային շարժման» և ՊԳԾ-ի միջև:

1977 թ. մարտին դավադրար սպանվեց «Ազգային շարժման» Կենտրոնական բաղադրական խորհրդի նախագահ Ք. Զուրաբյանը։ Այդ պաշտոնը ստանձնեց նրա որդին՝ Վախի Զուրաբյանը։ Զուրաբյանի մահը մեծ կորուստ էր ոչ միայն Լիբանանի ազգային շարժման, այլև ողջ արաբական ազգային-ազատագրական շարժման համար։ «Ազգային շարժումը» ժամանակավորապես հետաձգեց Լիբանանի կառուցվածքի բաղադրական-դեմոկրատական վերափոխման պահանջը՝ մտկատեղ, ինչպես նաև բոլոր առաջադիմական ուժերը, դատապարտեցին Սադաթի կատարած այցը Իսրայելը։

Զորքող փուլը՝ Սադաթի Իսրայել կատարած այցից մինչև Քեմալ-Դիկիի գործադրը (1977 թ. նոյեմբերի 19—1978 թ. հուլիսի 17)։ Եզդիպտոսը զուրս դառնալով Իսրայելին դիմակայող արաբական ճակատից, լքեց արաբական ժողովուրդների արդար հարցը, մեկուսացավ արաբական աշխարհից և օրչեկ-տիփորեն նպաստեց Միքնավոր արևելքում ԱՄՆ-ի և Իսրայելի դիրքերի ամրապնդմանը։

Վերջ նշված ծրագրի կենսագործման նպատակով ամերիկյան իմպերիալիզմը համաբարեցեց արաբական աշխարհի «հեղեղերի շրտալայն» բուրդ ուժերին։ Լիբանանը վերստին զարձակ Քեմալ-Դիկիի կողմնակիցներին և հակառակորդների պատերազմի դաշտ։ Այնքան դիմադիր Իսրայելի անմիջական օգնությամբ։ 1978 թ. մարտի 16-ին իսրայելական զորքերը ներխուժեցին Լիբանան և դրավեցին նրա տարածքի զգալի մասը՝ ընդհուպ մինչև Լիտանի գետը։

Լիբանանի հայրենասիրական ուժերի և ՊՊԾ-ի համատեղ հերոսական դիմադրության, ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների օժանդակության շնորհիվ, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի № 425 և 426 բանձների պահանջով, երեք ամիս անց իսրայելական զորքերը զուրկ եղան Լիբանանից, սակայն տարածքի սահմանազոտային մասը հանձնեցին ոչ թե լիբանանյան կառավարությանը, այլ զրեցին իրենց զործակալ, մայրը Սաադ Հազգադի սեօրինության տակ։ Անհրաժեշտ պաշտպանություն գտնելով բուն

իսկ լիբանանյան կառավարության կողմից և իրեն հայտարարելով «օրինականության» ներկայացուցիչը, Հազգադը այդ տարածքը հայտարարեց «անկախ Լիբանան», որպեսզի բողոքարկի իսրայելական փաստական գրավման նպատակը⁶³։

Այս շրջանում «Լիբանանյան ձակատի» ներսում սուր տարաձայնությունները առաջացան փազանդավորների և Լիբանանի Նախկին պրեզիդենտ Մ. Ֆրանժիեի միջև, որը զեկավարում էր Զորքային շրջանի մարտնիներ խմբավորումը։ Երկվակ դաշնակիցների ու բախկանների միջև զինված ընդհարումները կատարի բնույթ էին կրում, հատկապես այն բանից հետո, երբ փազանդավորները սպանեցին Նախկին պրեզիդենտի որդուն՝ Տանի Ֆրանժիեին։

Փազանդավորներն ու շամունականները հարձակումներ կազմակերպեցին նաև Լիբանանի հայ համայնքի դեմ։ 1978 թ. հոկտեմբերյան իրադարձությունների ժամանակ զոհվեցին 80 և վիրավորվեցին 350, իսկ 1979 թ. սեպտեմբերին համապատասխանաբար՝ 25 և 30 հայեր, անևանգվածների թիվը հասավ 80-ի։ Մեծ էր նաև հայերին հասցված նյութական վնասը⁶⁴։

Ն. Զ. Հովհաննիսյանն իր աշխատության մեջ ամփոփելով հայերի դեմ աչքեր դիմված հարձակման և լիբանանահայտության ինքնապաշտպանական մարտերի արդյունքները, գրում է. «...Լիբանանյան աշերին չհաջողվեց իրագործել իրենց ռազմաքաղաքական ծրագրերը՝ հանդիման համայնքի նկատմամբ։ Զախոյվեցին նրանց փորձերը՝ ստիպելու լիբանանահայ համայնքին հրաժարվելու զրական լեզրություն բաղադրականություններից և միանալ «Լիբանանյան ձակատին»⁶⁵։

«Լիբանանյան ձակատի» զորամիավորումները հարձակվում էին նաև արաբական խաղաղապահական ուժերի միջուկը կազմող սիրիական զորքերի վրա։ Մեկուսապաշտ ուժերի հետ համատեղ պրեզիդենտ Բ. Մարդիար ներկայացրեց մի ծրագիր, որի նպատակն էր լիբանանյան բանակի, հետևապես նաև աշերի զորքերի ուժեղացումը՝ ի հաշիվ սիրիական զորքերի։ Լիբանանի հայրենասիրական բուրդ ուժերը մեծոք

պրեզիդենտի այդ խորամանկ ծրագրեր, որը միտում էր ճերշուժ գործադրել Սիրիայի վրա⁶⁵:

Հինգերորդ փուլը քննադիմացիան գործարքից մինչև 1979 թ. Հուլիս՝ Լ՛ԿԻ IV համագումարը: Քննադիմացի գործարքից անմիջապես հետո իմպերիալիստական ծրագրի ծանրություն էին տրոսեր տեղագրությանը կիրառել: Նա պետք է գտնանար իրագործվելիք ծրագրի երկրորդ օղակը: Այդ մասին էին վկայում ԱՄՆ-ի պրեզիդենտ Զ. Քարալերի, Սադամի և Քեզիմի բաղձալիմ չայտարարությունները: Այդ առումով խիստ ուշադրով էր Բեզիմի և Նալուսի Ի. Սարգսիսի հասցեագրված՝ Իսրայելի այնչևևեռու և հայտնության պայմանագրի կնքելու առաջարկը, որը ուղեկցվում էր հակառակ դեպքում կիրանանի դեմ իսրայելական հարձակումները շարունակելու սպառնալիքով:

Այս բարդ իրադրության պայմաններում, 1978 թ. Հոկտեմբերի 15—17-ը, Ի. Սարգսիսի գլխավորությամբ Բեյթ ադ Գինեում տեղի ունեցավ միջադատական՝ լազադապահպան ուժերի մասնակից պետությունների արտաքին զործերի միեռնադրերի խորհրդակցությունը: Ընդունված որոշումները նախատեսում էին Արևելյան Բեյրութի մոտորի մոտ սիրիական զորքերի փոխադրումը սառույցային ուժերով, Իսկ քաղաքական բնույթի որոշումները ապահովում էին լիբանանյան ճգնաժամի կարգավորման անհրաժեշտ տարրերը: Կիրանանի հայրենասիրական ու դեմոկրատական ուժերը պաշտպանեցին այլ որոշումները, որոնց դեմ դուրս եկան փաղանգավորներն ու շամունեականները: Սակայն պրեզիդենտ Ի. Սարգսի անվճռական դիրքի, ինչպես նաև ամերիկա-իսրայելական դավաճի ուժերի մոտեցումների հետևանքով հնարավոր չեղավ իրագործել Բեյթ ադ Գինեի դրական որոշումները⁶⁷:

Սովետական Միությունը հենց սկզբից հանդես է եկել Կիրանանում երաշխապահ պատերազմի դադարեցման օգտին, այն բանի օգտին, որ այդ երկրի առաջգիմ ուժերը և պաղեստինցի հայրենասերները զերծ մնան շարժախմբելուց:

որ պահպանվի կիրանանի պետական միասնությունը և վիճեցվի այդ երկրի մասնատման հետադիմական պլանը:

Կիրանանի մասնատման ծրագրերի դեմ և երկրի քաղաքական ու սոցիալ-դեմոկրատական հետագա զարգացման համար ղեկավարին ու բարդ պայքար են ծավալում առաջադիմական-հայրենասիրական ուժերը, ինչպես նաև Պաղեստինի դեմոկրատիայի շարժումը: Երանք ամեն կերպ ջանում են բնույթնել ճգնաժամի ռազմաքաղաքական լարվածությունը: Այդ մասին է վկայում 1980 թ. փետրվարի 14-ի խաղաղ կարգավորման մասին հրապարակված ծրագրերը: Երանքին իր էությունամբ փոխգիշական է: Այն հատկապես ընդունում է կրոնադավանական համակարգի գլուխները և երկա փուլում (պայմանով, որ համապատասխան փոփոխություններ մտցրվեն բանակում և այլ պետական հիմնարկներում՝ ազատովելու կրոնադավանական համապարակչությունը) և չի կոնկրետացնում քաղաքական ու սոցիալ-անտեսական արմատական բարեփոխությունների պահանջները:

Սակայն այս անգամ էլ ղեկավարի զարգացումը այլ ընթացք ընդունեց: Սգրավելով «ստրատեգիական դաշինքի» ղեկի իրենց դաշնակցի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների բաժնայտ աշակերտությունից, իսրայելական զորքերը 1982 թ. հունիսի 6-ին կրկին ներխուժեցին կիրանան, գրավեցին նրա տարածքի մեկ երրորդը և ընդհուպ մոտեցան Բեյրութին: Մանր հարված հասցվեց ՊԳԾ-ին ու կիրանանի հայրենասիրական ուժերին:

ԱՄՆ-ի օգնությամբ Իսրայելը կիրանանը վերածեց փորձարարական հրաձգարանի: Զոհվեցին հազարավոր խաղաղ բնակիչներ: Սպրտիվում ինտրվենտներն օդապարհների ամերիկյան սպառազինությունների նորադույն տեսակները, ելվ շնայած դրան, ագրեսորը 80 օր ղոփում էր արևմտյան Բեյրութի մատույցների մոտ, որոնց պաշտպանում էին կիրանանի հայրենասիրական ուժերը, պաղեստինցիները և սիրիական զորքերը: Կիրանանյան դաշնակցիցների խնորհքով, ինչպես նաև ԱՄՆ-ի և ՊԱԿ-ի Գործկոմի նախաճա՛հ Ցա. Արա-

ֆաթի միջև ձևեր բերված պայմանավորվածության համաձայն, պաղեստինյան զիմապրոֆյան շարժման մարտիկները հեռացան Արևմտյան Բեյրութից, Բարախը և Նրա ամերիկյան հովանավորները պնդում էին, թե իսրայելական բանակը կիրանան մտավ Գե ինչ, պաղեստինցիների շոկատները Բեյրութից վտարելու համար: Գե ինչ, պաղեստինցիները հեռացան: Իսկ օկուպանտները մտադիր էլ չեն հեռանալ կիրանանից:

Իսրայելական դավիթիների պաշտպանության շնորհիվ կիրանանում իշխանությունն զենի մտ Նայտնից փաղանգվորների կուսակցությունը: Հանրապետական պրեզիդենտ քնտրվեց «Իրանական ճակատի» ռազմական ուժերի հրամանատար Բաշիր ժմայելը, որը կիրանանյան աչերի ամենագրեղ զենք էր: Պրեզիդենտական պարտականությունները շտանձնած Բ. ժմայելը դավադրաբար օպանվեց: Այդ պոստ ստանձնեց Նրա եղբայրը՝ Ամին ժմայելը:

Կիրանանում սեղադրվեցին, այսպես կոչված, «բազմազգ ուժեր», որոնք ԱՄՆ-ի հետ որևէ անընթացում չունեին: «Բազմազգ զորքերի» ընդհանուր թվազանը 4800 զինվոր էր, որոնցից 2000՝ ֆրանսիացի, 1500՝ իտալացի, 100՝ անգլիացի, 1200՝ ամերիկացի: Հետագայում ամերիկյան ծովային ճեռանակների թվազանը ավելացավ ևս 1800 զինվորով: Պենանտի ափհանումը ծովից պաշտպանվում է ԱՄՆ-ի վեցերորդ նավատորմի ռազմանավերով: Կիրանանում ԱՄՆ-ի զինված ուժերը ոչ միայն չեն հանազում իսրայելական բանակի հանցագործություններին, այլև իսրայելում են զորքեր կիրանանյան հողում այդ ուժերի ներկայությունը էլ ավելի ապակայունացրեց իտադրությունը մալքարազարում, հանգեցրեց մի շարք դիվերսիաների ու բռնության այլ ակտերի: Ստեղծված պայմաններում կիրանանի համար լավագույն էլքը երա տարածքից «բազմազգ ուժերի» զուրս բերումն էր:

Մակայն, ինչպես երևում է ամերիկյան վարչակազմի ղեկավարների հայտարարություններից, Միացյալ Նահանգները ամենևին էլ մտադիր չէին զորքերը զուրս բերել կիրանանից: ԱՄՆ-ը պլանավորում է Բեյրութից ոչ հեռու գտնվող Գամուրի շրջանում ստեղծել մշտական ամերիկյան բազա,

այնտեղ փոխադրել ամերիկյան զորասմբերի հիմնական ուժերը: Արաբների դեմ Իսրայելի հանցավոր աղբյուրը գործողությունները համար պատասխանատվությունը ամբողջապես կրում է նաև ԱՄՆ-ը:

Չնայած լիբանանյան և պաղեստինյան հայրենասերների գործողություններից պաշտպանվելու դավիթիների քուլտը փորձերին պատիգանական գործողությունների հետևանքով նրանց կենդանի ուժի, սեխնիկայի կորուստները անընդհատ մեծանում են: Կիրանանի բազաբական շրջանները հանդես են գալիս լիբանանյան ժողովրդին անջատ հաշտության համաձայնագրի կապիտուլյանտական տարրերակ պատրաստելու Իսրայելի և ամերիկյան հովանավորների փորձերի պնդմանը: Վաշինգտոնը, վիժեցնելով կիրանանում թեև Ավիլի աղբյուրի կասեցնելու նպատակով միջազգային բնկերակցության ձեռնարկած ջանքերը, կիրանանի իշխանությունների վրա ճնշում էր գործողությունը, սեխնիկայի նրանց ստիպի համաձայնել ընդունելու իսրայելական պայմանները՝ «հարաբերությունների նորմալացում» վերաբերյալ պահանջները:

